



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1925

1344

48
X-222

96
~~34~~

~~1208~~



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ



1925



Գ Ր Ե Ց

ԳՐԵԳՐԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՐՈՒՄՆՁՏԵԱՆՑ

Կ. ՊՕԼԻՍ

Եկնի-ձամի Զիլինկիրլեր Ճատտեաի բիւ 2
Ս. Ղ. Ե. Եազմաճեան գրատուն



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

4 8 7 7

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Գրքոյկիս դրան վրայ հայերէն Ս. Ղ. Ե. տառերով կնիք կայ : Սոյն յատուկ կնիքը չը կրող օրինակներն առանց հրամանի տպեալ անվաներ ըլլալով՝ քե՛ տպողը և քե՛ վաճառողը՝ առաջի օրինաց պատասխանատու և պատժոյ ենթակայ են :

Կ. Պօլիս 1877

Ս. Ղ. Ե. Ե.



Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ԿԸՈՅ

ՄԵՐԵՆԻ Թ. ԷՋՄԵԹՆԻ

Թ. 84

ՅԱՌԱԶԱՏԱՆ



Հայաստանեայց եկեղեցւոյ մանկունքի ՊԵՐՍՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ սոյն դասագիրքն պատրաստելով, կը յուսամ թէ բաւական զիւրուսոյց է եւ կարեւոր դասերը կը պարունակէ ։ Երկրորդ տպագրութեանը կը խոստանամ փոփոխութիւններ ընել, եւ աւելի կանոնաւորել փորձառու ղիտողութեամբ, եթէ ուսուցիչք հաճին քաջալերել զմեզ ։

Մեզ աւելորդ թուեցաւ դաս մը մանր մունր ուսմունք գետեղել Քրիստոնէականին մէջ, որոցմէ մանուկ ուսանողն երբէք բան մը չը հասկնար ։ այլ բաւական համարեցանք բուն հաւատոյ հիմունքը, Քրիստոսի գալստեան համար Հին Կտակարանէն մի քանի օրինակք եւ վկայութիւնք, եւ ապա Նոր Կտակարանը համառօտել, ընդ որ նաեւ մաս մի Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութենէն ։

Մանկական բարոյականի պատկանեալ դաս մը զրինք 'ի սկիզբն գրքուկիս ։

Սակայն դասագիրք մը 'երբէք' արժէք ու

Վարդինք հունենար, եթէ ուսուցիչք զայն
բարւոք չը գործածեն յուսումն :

Այս նուիրական ուսումն՝ որ ամէն ժամա-
նակի մէջ կարեւոր է քրիստոնէի համար, ա-
ռաւել եւս կարեւորագոյն է 'ի ներկայս մեր
եկեղեցւոյ մանկանց. ուստի եթէ այսու կրցած
ենք զոյգն՝ ծառայութիւն մի ընել, այն շատ
է մեղ համարել վարձատրութիւն :

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Գ. Վ.



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ



Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս .
Ամէն :

Հայր մեր որ յերկինս ես , սուրբ եւ
ղիցի անուն քո . եկեացէ արքայութիւն
քո . եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և
յերկրի . զհաց մեր հանապազորդ տուր
մեզ այսօր . թող մեզ զպարտիս մեր ,
որպէս և մեք թողումք մերոց պարտա-
պանաց . և մի տանիր զմեզ 'ի փորձու-
թիւն . այլ փրկեա զմեզ 'ի չարէ : Զի քո
է արքայութիւն և զօրութիւն և փառք
յաւիտեանս . ամէն :



Եւ անս երեսեցան նոցա Մովսէս
եւ եղիա՝ որ խօսեին ընդ նմա :

Ա. ՄԱՍՆ



ՀԱՐՑ

Քրիստոնեայ ի՞նչ ըսել է :

ՊԱՏԱՍԻԱՆ

Քրիստոսի հաւատացող և անոր պատուէրները պահող ըսել է :

Հ. Քրիստոսի ի՞նչպէս հաւատալու է :

Պ. Քրիստոս Աստուծոյ որդի է, որ մարդոց սիրոյն համար մարդ եղաւ, և մարդիկ փրկկեց :

Հ. Քրիստոսի պատուէրներն ի՞նչ են :

Պ. Քրիստոս կը պատուիրէ որ մենք սրտով ու հոգւով զԱս-

տուած սիրենք և պաշտենք. կը պատուիրէ որ մենք մէկը մէկ սիրենք ու իրարու օգնենք :

Հ. Քրիստոս իր հաւատացելոց և պատուէր պահողներուն ի՞նչ խոստացած է :

Պ. Քրիստոս խոստացած է Քրիստոնէից որ աշխարհիս մէջ խաղաղ հոգւով պիտի ապրին, և երկնից մէջ անմահութիւն և երջանկութիւն պիտի վայելեն :

Հ. Քրիստոս որդի Աստուծոյ լինելը ո՞ւր գրուած է :

Պ. Քրիստոս որդի Աստուծոյ լինելը Աստուածաշունչ Սուրբ Գրքի մէջը գրուած է, որ կ'ըսուի Հին և Նոր կտակարան :

Հ. Քրիստոսի աշխարհ գալէն
առաջ թէ ետքը գրուած է
Աստուածաշունչը :

Պ. Քրիստոսի աշխարհ գալէն
առաջ գրուած է Հին Կտակա-
կարանը սուրբ Մարգարէից
ձեռքով, և Քրիստոսի համ-
բառնալէն ետքը գրուած է
Նոր Կտակարանը՝ սուրբ Առա-
քելոց ձեռքով :

Հ. Քրիստոնէի առաջին ու-
սումն և դաւանութիւնն ի՞նչ
է :

Պ. Ամենասուրբ Երրորդու-
թեան՝ Հօր և Որդւոց և Հոգւ-
ոցն երկրպագութիւն ընել,
և հաւատալ թէ Աստուած,
ոչնչէ ստեղծեց երկինք և եր-

կիրը և բոլոր արարածները
կամենալով և ըսելով :

Հ. Աստուծոյ անունը ի՞նչ է :

Պ. ՈՐ ԷՆ :

Հ. Ուրիշ ի՞նչ անուն կը տրը-
ուի Աստուծոյ :

Պ. Աստուած ողորմած, մար-
դասէր, բարի, արդար, արա-
րիչ, նախախնամող, յաւիտե-
նական, ամենակարող, ամենա-
տես, ևն :

Հ. Աստուած ո՞ւր է :

Պ. Աստուած ամեն ուրեք է,
ամէնը կը տեսնէ, ամէնուն
խորհուրդը և գործը կ'իմանայ,
և ամէնքը կը դատէ :

Հ. Աստուած ե՞րբ կը դատէ
մարդիկները :

Պ. Աստուած թէպէտ աչ-

խարհիս վրայ բարի մարդիկնե-
րը կը վարձատրէ և չարերը կը
պատժէ. բայց բուն դատաս-
տանը աշխարհիս վերջը պիտի
ընէ Տէրն մեր Քրիստոս :

Հ. Ի՞նչպէս պիտի դատէ մե-
ռած մարդիկ :

Պ. Աստուծոյ հրամանաւ և
զօրութեամբ բոլոր մեռած
մարմինները յարութիւն պի-
տի առնեն միանալով իրենց
հոգւոյն հետ , և անմահ պի-
տի մնան արդարները արքա-
յութեան մէջը , մեղաւորնե-
րը դժոխոց մէջը :

Հ. Եկեղեցւոյ խորհուրդնե-
րը քանի՞ են :

Պ. Եօթն են . մկրտութիւն ,
դրոշմ , ապաշխարութիւն ,

հաղորդութիւն , պսակ ա-
մուսնութեան , ձեռնադրու-
թիւն , օծումն հիւանդաց :

Հ. Ամէն ազգաց եկեղեցինե-
րը միեւնոյն են :

Պ. Այն ազգաց եկեղեցինե-
րը որ եօթն խորհուրդ կ'ըն-
դունին՝ միեւնոյն են , և կը
կոչուին՝ մի , սուրբ , ուղղա-
փառ , կաթողիկէ և առաքելա-
կան եկեղեցի :

Հ. Եկեղեցին ի՞նչ պաշտօն
ունի երկրիս վրայ :

Պ. Եկեղեցին կ'ուսուցանէ
հաւատացելոց՝ Աստուծոյ կամ-
քը , կ'ուսուցանէ մեղքերէ ու
մոլութիւններէ հեռու կե-
նալ . մեղանչողները ուղղու-
թեան և փրկութեան կը կոչէ ,

առաքինութիւնն կ'ուսուցանէ,
և աշխարհիս մէջը երկնից թա-
գաւորութեան պատկերն է .
որոյ որդիք պէտք է լինին ար-
դար, խաղարարար, բարեգործ,
աշխատող, և գիտնական մար-
դիկ ու ժողովուրդ :

Հ. Որո՞նք են մարդոց գլխա-
ւոր մեղքերը :

Պ. Գլխաւոր մեղքերը եօթն
են. հպարտութիւն, նախանձ,
բարկութիւն, ծուլութիւն,
ազահութիւն, օրկրամոլու-
թիւն, բզրխստութիւն :

Հ. Քրիստոնեայ մանկանց մեղ-
քերն ի՞նչ են :

Պ. Քրիստոնեայ մանուկները
կը մեղանչեն եթէ աղօթք չը-
նեն, եթէ իրենց ծնողքը, վար-

ժապէտները և իրենցմէ մե-
ծերը չյարգեն, եթէ մէկը
վշտացունեն կամ լացունեն,
եթէ նախանձին, եթէ յամա-
ռին, եթէ հպարտանան, ե-
թէ ազբատ և խեղ մարդոց
վրայ խնդան կամ արհամար-
հեն, եթէ ծոյլ լինին, եթէ
բարկանան, եթէ գէշ խօսին,
սուտ խօսին, և եթէ իրենց
չեղած բանը՝ առանց տիրոջ հը-
րամանին առնեն :

Հ. Այս մեղքերու գէժ ի՞նչ
առաքինութիւններ պէտք են :

Պ. Խոնարհութիւն, եղբայր-
սիրութիւն, հեղութիւն ու
համբերութիւն, արիութիւն
և աշխատասիրութիւն, ողոր-
մածութիւն և ազբատասի-

171
1925



րու թիւն, բարեխառնու թիւն,
զորս աղօթքով խնդրելու ենք
Սատուծոյ :

Հ. Քրիստոնէի վարքն ի՞նչ
պէս լինելու է :

Պ. Քրիստոնէայն պէտք է աշ-
խարհիս վրայ բարի գործէ,
խաղաղ սպրի, կռիւ և խռո-
վու թիւն չունենայ, իր բա-
րեկամն և իր թշնամին սի-
րէ :

Հ. Քրիստոնէի խօսքերն ի՞նչ
պէս լինելու են :

Պ. Քրիստոնէայն պէտք է
միշտ ճշմարիտն խօսի, սուտ
կամ իրաւ երգումն չընէ,
պարկեշտ խօսի, երբէք հայ-
հոյու թիւն կամ գէշ բառ մը
բերնէն չհանէ :

Հ. Քրիստոնէայն ի՞նչպէս ա-
ղօթելու է :

Պ. Քրիստոնէայն Սատուծոյ
արքայու թիւնը և անոր արգա-
րու թիւնը պէտք է խնդրէ իր
աղօթքով. աշխարհի համար
խաղաղու թիւն, գերիներու
և կապեալներու ազատու-
թիւն, իրեն գէմ մեղանչող-
ներուն թողու թիւն :

Հ. Քրիստոնէայն ո՞ւր տեղ ա-
ղօթելու է :

Պ. Քրիստոնէայն գոնէ ամէն
կիրակի օրերը յատկապէս ա-
ղօթելու համար սուրբ եկե-
ղեցի երթալու է, բայց պար-
տաւոր է նաև ուր որ լինի՝
հայ ուտելէ առաջ և վերջը

աղօթել, իրիկուն քնանալէն
 առաջ և առաւօտ արթննա-
 լուն պէս աղօթել, երեսը խա-
 չակնքելով և « Հայր մեր որ
 յերկինս ես, » աղօթքն ըսե-
 լով :

Հ. Քրիստոնեայն ի՛նչու հա-
 մար այդ աղօթքները պիտի ը-
 նէ :

Պ. Քրիստոնեայն աղօթելով
 կը գոհանայ Աստուծմէ, որ
 իրեն հաց կուտայ և խնամք
 կը տանի մեր հոգւոյն և մարմ-
 նոյն. գիշեր ու ցորեկ կը պահ-
 պանէ մեզի փորձութիւննե-
 րէ :

Հ. Քրիստոս ամէն տղաքնե-
 րը կը սիրէ :

Պ. Քրիստոս կը սիրէ և կ'օրհ-

նէ միայն այն տղաքները՝ որ
 իրենց ծնողաց հնազանդ կը
 մնան, իրենցմէ մեծերը կը յար-
 գեն, եկեղեցի կ'երթան, ա-
 ղօթք կ'ընեն, կարգալ գրել կը
 սիրեն, և գէշ չեն խօսիր, ու
 գէշ չեն գործեր :

Հ. Քրիստոսի սիրած և օրհ-
 նած տղաքներ ի՛նչ կը լինին :

Պ. Քրիստոս զով որ սիրէ ու
 օրհնէ, անիկայ շատ շնորհալի
 և իմաստուն մէկը կը լինի, ա-
 մէն մարդէ կը սիրուի. անոր
 հացը, հանգերձը, տունը, ըն-
 կեր, բարեկամ չը պակսիր. Քր-
 իստոս ամէն բան կուտայ ա-
 նոր և կը պահպանէ փորձանք-
 ներէ :

Հ. Քրիստոնեայ լինելու նը-
շաններն ի՞նչ են :

Պ. Քրիստոնեայ լինելու նը-
շաններն են քահանայի ձեռքով
մկրտուիլ աւագանի օրհնեալ
ջրով, սուրբ մեռեանով օծուիլ,
սրատարագի սուրբ հացը և
գինին ճաշակել, որ Քրիստոսի
մարմին և արիւնն է. և եթէ
մեղք գործենք՝ քահանային
խոստովանինք, Աստուծոյ մե-
ղայ ըսենք ու ապաշխարենք :

Հ. Քրիստոնէին մկրտուիլը
ի՞նչ խորհուրդ ունի :

Պ. Քրիստոնեայն մկրտուե-
լով կը լինի որդեգիր Հօր Աս-
տուծոյ :

Հ. Քրիստոնէին սուրբ մեռու-
նով օծուիլը ի՞նչ խորհուրդ է :

Պ. Քրիստոնեայն սուրբ մե-
ռոնով օծուելով կը դրոշմուի,
կը կնքուի Սուրբ Հոգւով և
կը զօրանայ հաւատքով :

Հ. Քրիստոնէին սուրբ հաց
և գինին ճաշակելը ի՞նչ խոր-
հուրդ է :

Պ. Քրիստոնեայն սուրբ հաց
և գինին ճաշակելով Քրիստո-
սի կը հաղորդուի, Քրիստոսի
հետ կը միանայ, և ասոր հա-
մար Սուրբ Հաղորդութիւն
կ'ըսուի :



Հ. Քրիստոնէութեան հաւատոյ հիմն ինչ է:

Պ. Քրիստոնէութեան հաւատոյ հիմն Ամենասուրբ Երրորդութիւնն է. Հայր, Արդի, և Հոգի Սուրբ, որ մէկ անունով՝ Աստուած կը զաւանինք:

Հ. Հայր, Արդի և Հոգին Սուրբ անձնաւորութեամբ ալ մի են:

Պ. Ոչ: Հայր, Արդի, և Հոգին Սուրբ անձնաւորութեամբ զատ են. բայց էութեամբ, զօրութեամբ և փառօք մէկ են:

Հ. Աստուած սկիզբն ունի:

Պ. Աստուած ոչ սկիզբն ունի և ոչ վերջ: Աստուած է ստեղծ

ծեր ամենայն ինչ. Երկինք, Երկիր, հրեշտակ, հոգի, և այլն:

Հ. Աստուած որո՞ւ համար ստեղծեց այս աշխարհը:

Պ. Աստուած Երկիրը բոլոր կենդանիներով, պտուղներով, և Երկինքը արեւով, լուսնով, ու աստղերով զարդարած՝ պատրաստեց մարդոց համար:

Հ. Աստուծոյ ստեղծած առաջին մարդն ո՞վ էր:

Պ. Աստուծոյ ստեղծած առաջին մարդն էր Ադամ, և առաջին կինը՝ Եւայ, որոնք բնակեցուց սքանչելի դրախտին մէջ. ասոնք էթէ Աստուծոյ հնազանդ մնային, անմահ պիտի մնային:

Հ. Ի՞նչ բրաւ մարդը, և ի՞նչ

եղաւ իւր վիճակը :

Պ. Մարդը Աստուծոյ անհը նազանդ գտնուելով՝ անէծք ստացաւ որ մեռնի, բայց նոյն օրէն Որդին Աստուած մարդանալու և մարդիկ իրենց մեղքէն ազատելու Աստուածային խորհուրդը յայտնուեցաւ մարդոյն. Ադամէն սկսեալ՝ ամէն Աստուածապաշտ սուրբ նահապետները և մարգարէները յուսով և փափաքով կ'ըստատէին այն աւուր :

Հ. Որո՞նք էին առաջին նահապետները :

Պ. Աստուածապաշտ և սուրբ նահապետներ էին Ադամ և Ադամայ Սեթ որդւոյն սերունդըն, որ զգոյշ կեցան Ադամայ

չար որդւոյն՝ Կայենի անօրէնու անաստուած վարբէն :

Հ. Ո՞վ էր Նոյ :

Պ. Սեթայ ցեղէն էր Նոյ նահապետը, որ ընտանեօք և երեք զաւակներով մեկտեղ իր առաքինութեան համար ազատուեցաւ Ջրհեղեղէն՝ Աստուծոյ խնամքով տապանի մը մէջ մըտնելով :

Հ. Ջրհեղեղէն ետքը եկած նահապետները որո՞նք են :

Պ. Ջրհեղեղէն զկնի երբ մարդիկ նորէն անօրէնութեան և անաստուածութեան մէջ ինկան, Աստուած զինքը և իրեն կամքը յայտնեց Սբրահամ նահապետին. Սբրահամու որդին էր Իսահակ նահապետ,

և Իսահակայ որդին էր Յակոբ նահապետ, և Յակոբայ որդիք:

Հ. Յակոբ նահապետի սերունդը ո՞ր ազգն է:

Պ. Յակոբ նահապետի սերունդն է Իսրայէլի կամ Հրէից ազգը, որ մի միայն Աստուածապաշտ ազգ էր Քրիստոսի գալստենէն յառաջ:

Հ. Նահապետաց հաւատքն ի՞նչ էր:

Պ. Նահապետները որդւոց յորդիս թէ՛ Աստուածաբաշտութեան հաւատքը և թէ՛ Որդւոցն Աստուծոյ մարդեղութեանը յոյս կ'աւանդէին:

Հ. Աստուած ուրիշ կերպով ալ կը յայտնէր Քրիստոսի մարդեղութիւնը:

Պ. Երբեմն երբեմն ևս Աստուծոյ հրեշտակի խօսելով և զանազան օրինակներով, տեսիլքներով և հրաշքներով կը յայտնուէր:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Աբրահամ նահապետին իր որդին Իսահակը Աստուծոյ մատաղ բնելը, որ նշան էր Քրիստոսի խաչին վրայ մեռնելուն մարդոց սիրոյն և փրկութեան համար:

Հ. Յակոբ նահապետին տեսիլքն ի՞նչ էր:

Պ. Յակոբ նահապետը՝ տեսիլքի մէջ՝ երկրէս մինչև երկինքը սանդուխ մը տեսաւ, որուն գլուխը Աստուած նստած էր, և հրեշտակները սանդուխէն

կ'ելլէին կ'իջնէին . և մարդիկ
վեր կ'ելլէին , որ նշան էր Քր-
րիստոսի յաշխարհ գալուն ,
մարդ լինելուն , և մարդիկը
յերկինս առաջնորդելուն :

Հ. Մարգարէից գլխաւորն ո՞վ
է :

Պ. Մարգարէներուն գլխա-
ւորն է Մովսէս մարգարէն , որ
Աստուածաշունչի Հին Կտա-
կարանը գրեց , աշխարհիս ըս-
տեղձմանէն մինչև իր օրը . իր-
մէ ետքը եկող մարգարէներն
ալ իրենց ժամանակի պատմու-
թիւնները գրեցին . և ամենքն
ալ Քրիստոսի աշխարհ գա-
լուն վրայ կը մարգարէանային :

Հ. Աստուած օրէնքներ տը-
ուած էր մարդոց :

Պ. Մարդիկը Քրիստոսի վեր-
կութեան արժանի ընելու հա-
մար Աստուած օրէնքներ տը-
ուած էր , որ գթութեամբ և
արդարութեամբ աշխարհիս
մէջ իրարու հետ վարուէին :

Հ. Որո՞նք են այդ օրէնքները :

Պ. Այս օրէնքներն են բնա-
կան և դրական օրէնք . բնա-
կան օրէնքը մարդու խղճմը
տանքն է , որ ամէն մարդ ու-
նի . իսկ դրական օրէնքը Մով-
սէս մարգարէի ձեռքով քարե-
տախտակներու վրայ գրուած
Տասնաբանեայ օրէնքն է :

Հ. Բնական օրէնքով ի՞նչ
կ'ուսանի մարդ :

Պ. Բնականապէս մարդս իր
անձին վրայ և բոլոր արարա-

ծոց վրայ նայելով՝ կը ճանչնայ
 արարիչ և նախախնամող Աս-
 տուածը, և Անոր ներկայու-
 թիւնը ամէն տեղ. կը վախ-
 նայ Անոր զօրութեանէն, որ
 չարերը կը պատժէ, և կ'ապա-
 ւինի Անոր ողորմութեանը, ո-
 րով իր մեղաց թողութիւն կը
 գանէ :

Հ. Բնական օրինաց բովան-
 դակութիւնը ի՞նչ է :

Պ. Աստուած բնական օրէն-
 քով ուսուցած է մարդոց՝ ինչ
 որ կ'ուզէ մարդ մը որ ուրիշ
 ներք իրեն ընեն, ինքն ալ նոյնը
 թող ընէ ուրիշներուն. և ո-
 րովհետեւ ոչ ոք կ'ուզէ որ ու-
 րիշէ մը վնաս կրէ, պէտք է
 որ ինքն ալ ուրիշի մը չ'վնասէ :

Եւ եթէ սխարմամբ մէկի մը
 վնաս ընէ, պէտք է անոր փո-
 խարէնը վճարէ :

Հ. Տասնաբանեայ օրէնքը ի՞նչ
 կ'ուսուցանէ :

Պ. Տասնաբանեայ օրէնքով
 Աստուած կ'ուսուցանէ մար-
 դոց թէ ի՞նչպէս զինքը պաշ-
 տելու ենք, և ի՞նչպէս վար-
 ուելու են մարդիկ մարդոց
 հետ :

Հ. Որո՞նք են Տասնաբանեայ
 օրէնքները :

- Պ. Ահաւասիկ.
- Ա. Քո Տէր Աստուածը ես
 եմ. ինձմէ զատ Աստուած չը
 կայ :
- Բ. Փայտէ, մետաղէ, կամ ու-
 թիշ նիւթէ կուռք սուտ աս-

տուած չչինես չպաշտես :

Գ. Չնչին բաներու համար իմ անունս բերանդ չառնուս, և իմ անունովս երգում չընես :

Դ. Շաբաթ օրը մարմնաւոր գործ չգործես, սուրբ պահես այն օրը :

Ե. Հայրդ ու մայրդ պատուես :

Զ. Մարդ չմեռցնես :

Է. Շնութիւն չընես :

Ը. Գողութիւն չընես :

Թ. Սուտ չխօսիս, սուտ վկայութիւն չտաս :

Ժ. Ուրիշի ունեցածին չցանկանաս :

Հ. Աստուած Իսրայէլացւոց ազգին մասնաւոր ի՛նչ բարիք ըրած է :

Պ. Իսրայէլացւոց ազգը Եգիպտացւոց Փարաւօն թագաւորին ձեռքի տակ գերի էին և չարաչար կը ծառայէին. Աստուած Մովսէս մարգարէի ձեռքով շատ հրաշքներ ըրաւ և Իսրայէլացիքը ազատելով տարաւ Աւետեաց երկիրը :

Հ. Ի՞նչ նշան էր այս :

Պ. Այս նշան էր որ Քրիստոս ալ իրեն հաւատացեալները պիտի փրկէր իրենց մեղաց համար ունեցած չարչարանքէն և անոնց հոգիները երկնից արքայութիւնը պիտի տանէր :

Հ. Իսրայէլացիք ինչո՞ւ Չատկի օրը գառն կ'ուտեն :

Պ. Եգիպտոսէն ելած գիշերնին՝ Աստուած պատուիրեց Իս-

բայելացւոց որ գառն խորովեն
 ու ուտեն, և գառին արիւնը
 իրենց տուներու գրան ճակա-
 տը քսեն. վասնզի Աստուծոյ
 հրեշտակը Եգիպտացւոց ան-
 գրանիկները նոյն գիշերը ջար-
 դեց, և Իսրայելացւոց դռնե-
 րուն գառին արեան նշանը
 տեսնալով, անոնց չմօտիկցաւ :

Հ. Ի՞նչ է Չատիկը :

Պ. Այս գառն ուտելու ասնը
 ամէն տարի կը կատարէին Իս-
 րայելացիք, որ կ'ըսուէր Չա-
 տիկ, իրենց ազատութեան յի-
 շատակին համար :

Հ. Ի՞նչ նշան էր գառն, գա-
 ուին արիւնը, և Չատիկը :

Պ. Այս նշան էր որ Քրիստոս
 իբրև գառն Աստուծոյ՝ Հրէից

Չատիկն օրը խաչէն վրայ իր ա-
 րիւնը պիտի թափէր, և իրեն
 հաւատացեալները իրենց մե-
 ղաց գերութենէն պիտի ա-
 զատուէին :

Հ. Ի՞նչ էր խոյի պատարագը :

Պ. Աստուած Մովսէսի ձեռ-
 քով պատուիրած էր Իսրայել-
 լացւոց, որ տարին մէկ անգամ
 քահանայապետը խոյ մը պա-
 տարագէր Աստուծոյ, և այն
 պատարագածին արիւնը սրսկէր
 բոլոր ժողովրդոց վրայ, որով
 անոնց մեղաց թողութիւն կը
 տրուէր :

Հ. Որո՞ւ օրինակ էր :

Պ. Քրիստոսի օրինակ էր քա-
 հանայապետն, և խոյի պատա-
 րագն՝ Քրիստոսի մարմնոց և ար-

եան խաչին վրայ պատարագ,
ուելուն, որով բոլոր հաւա-
տացեալներուն մեզաց թողու-
թիւն բաշխեց:

Հ. Դաւիթ և Սողոմօն ո՞վ էին:

Պ. Դաւիթ մարգարէն շատ
Աստուածասէր լինելով, Աստ-
ուած խոստացաւ անոր որ Քր-
րիստոս անոր ցեղէն ծնանի:
Եւ Դաւիթի որդին Սողոմօն ի-
մաստու թեամբ և խաղաղա-
սիրութեամբ՝ օրինակ էր Քր-
րիստոսի:


Հ. Մարգարէները ի՞նչ կը գը-
րէին և կը քարոզէին:

Պ. Ամէն մարգարէները բա-
ցարձակ կը քարոզէին և կը
գրէին Աստուծոյ որդւոյն Քր-
րիստոսի մարգանայը: Անոր Ա.

Կուսէն ծնանիլը, անոր Աւե-
տարանը, անոր հրաշքները,
անոր խաչուիլը, մեռնիլը,
թաղուիլը, յարութիւն առ-
նելը, և երկինք համբառնալը:

Հ. Քրիստոսի ծնանելու ժա-
մանակն էրբ էր:

Պ. Հրէից ազգէն թագաւոր
ու իշխան վերջացած էին, և
Երուսաղէմ ու բոլոր Հրէից
երկիրները ինկած էր Հռովմա-
յեցւոց իշխանութեանը տակ:
Ահա այս ժամանակն էր որ
Քրիստոս պիտի ծնանէր, վա-
սընզի մարգարէները այնպէս
գուշակած էին:



Հ. Քրիստոսի մօտ ծնողքը ո՞ր էին :

Պ. Դաւիթ մարգարէի թաղաւորական ցեղէն Յովակիմ անունով մարդ մը կար, որոյ կինն էր Աննայ. երկուքն ալ բարեպաշտ և արդարէին. բայց զաւակ չունէին. շատ աղօթք և ողորմութիւն կ'ընէին և կ'աղաչէին որ Աստուած իրենց բարի զաւակ մը շնորհէ. Աստուած պարգևեց անոնց շնորհալի դուստր մը, զոր անուանեցին Մարիամ. և երբոր երեք տարեկան եղաւ Մարիամ՝ ծնողքը տարին նուիրեցին

անիկայ Աստուծոյ տաճարին :
Հ. Ի՞նչպէս սնաւ Մարիամ Կոյսն :

Պ. Մարիամ Աստուծոյ տաճարին մէջ մեծցաւ, և բարեպաշտութեան մէջ կրթուելով լաւապէս ուսաւ Աստուածաշունչ սուրբ գիրքը. յաճախ կրկարդար Մարգարէից ըսածները Քրիստոսի աշխարհ գալուն վրայ, և անոր սիրով լեցուած կը փափաքէր որ արժանի լինի Քրիստոսը տեսնելու, և ուխտեց որ կոյս մնայ առանց ամուսնանալու :

Հ. Ի՞նչ վարք ունէր Մարիամ Սուրբ Կոյսն :

Պ. Մարիամ Կոյսը ամէն կերպ առաքինութիւններ ունէր, և

1344

հոգւով ու մարմնով սուրբ և
հեղ էր. ուստի Աստուած ա-
նիկաց ընտրեց արժանապէս ի-
րեն մայր ըլլալու :

Հ. Ո՛ւր կը բնակէր Մարիամ
Սուրբ Կոյսն :

Պ. Նազարէթ քաղաքի մէջ
կը բնակէր Յովսէփ անունով
ծերունի և բարեպաշտ մարդ
մը, որ նաևս Գաւիթ թագա-
ւորի ցեղէն էր : Ասիկայ եղաւ
պաշտպան Սուրբ Կոյս Մարի-
ամին, և իբրև իրեն խօսեցեալ
ը տարաւ իր տունը : Սուրբ
Կուսին ծնողք մեռած էին :

Հ. Սուրբ Կոյսն ինչով կ'ըզ
բաղէր Յովսէփայ տանը մէջ :

Պ. Սուրբ Կոյս Մարիամ Յով-
սէփայ տան մէջ հնազանդու-

թեամբ և դործունէ ու թեամբ
կ'աշխատէր, և իր աղօթքն ու
Աստուածաշունչի ընթերցու-
մըն ամէն օր կը շարունակէր :



Հ. Սուրբ Կոյսն ի՛նչպէս ող-
ջոյն ընդունեց հրեշտակէն :

Պ. Օր մը յանկարծ տեսաւ որ
Գաբրիէլ հրեշտակն իրեն ե-
կաւ, ողջոյն տուաւ. և կ'ը-
սէր. «Ուրախ լեր, բերկրեալ
ըդ, Տէր ընդ բեզ. դու պիտի

որդի ծնանիս, և անոր անունը
Փրկիչ պիտի դնես, :

Հ. Սուրբ Կոյսն մէկէն ընդ ու-
նեց հրեշտակին ողջոյնը :

Պ. Սուրբ Կոյսը պատասխա-
նեց հրեշտակին. Ես կոյս եմ,
ու ամուսին չունիմ. ի՞նչպէս
զաւակ կ'ունենամ: Եւ հրեշ-
տակն ըսաւ Սուրբ Կուսին.
«Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ,
և զօրութիւն Բարձրելոյն հո-
վանի լիցի ՚ի վերայ քո, և քեզ
մէ ծնածը որդի Աստուծոյ է,» :

Հ. Սուրբ Կոյսն ի՞նչպէս յղա-
ցաւ զՔրիստոս:

Պ. Երբոր Սուրբ Կոյսը պա-
տասխանեց թէ՛ «Աստուծոյ ա-
զախինն եմ ես. իրեն կամքը
թող լինի,», անմիջապէս Որդին

Աստուծոյ Սուրբ Կուսին ար-
դանդն իջնալով մարմին առաւ
Հոգւոյն Սրբոյ ներգործու-
թեամբ :

Հ. Գաբրիէլ հրեշտակն ուրիշ
բան յայտնեց Սուրբ Կուսին :

Պ. Գաբրիէլ հրեշտակը Սուրբ
Կոյս Մարիամին աւետիս տա-
լէն վեց ամիս յառաջ երեցած
էր Զաքարիա քահանայապե-
տին Աստուծոյ կողմանէ և ը-
սած էր որ անոր ամուլ ու պա-
ռաւ կինը Եղիսաբեթ պիտի
յղանայ ու շնորհալի զաւակ մը
պիտի ծնանի. Զաքարիա չհա-
ւատալով լեզուն կապուած
էր. իսկ Եղիսաբեթ յղի էր :
Այս բանը հրեշտակն յայտնեց
Սուրբ Կոյս Մարիամին :



Հ. Եղիսաբեթ ի՛նչպէս ըն-
դունեց Սուրբ Կուսին այցե-
լու թիւնը :

Պ. Սուրբ Կոյսն այցելու թեան
դնաց Եղիսաբեթին, որ իրեն
ազգական էր. և երբ ներս մը-
տաւ՝ Եղիսաբեթ բերկրու-
թեամբ և Հոգւով Սրբով լե-
ցուած օրհնութիւններ կար-
գաց Սուրբ Կուսին. «Մայր
Տեառն իմց», կոչեց անիկայ, և

և յայտնեց թէ իր արգանդին
մէջ Յօհաննէսը խաղալով կ'եր-
կիրպագէր Քրիստոսի, որ էր
յարգանդի Մարիամ Սուրբ
Կուսին :

Հ. Յովհաննու ծննդեան ա-
տեն ի՞նչ հրաշք եղաւ :

Պ. Սուրբ Կոյսն Մարիամ Նա-
զարէթ դարձած էր, երբ Յօ-
հաննէս ծնաւ. Չաքարիայի լե-
զուն բացուեցաւ Յօհաննէսի
ծննդենէն ու թ որ ետքը՝ ման-
կան անուներ կոչելուն օրը. Չա-
քարիա մարգարեացաւ Սուրբ
Հոգւով և խօսեցաւ իր ման-
կան համար թէ «Մարգարէ
Բարձրելոյն պիտի լինի, և
Քրիստոսի առջեւէն ընթանայ,
քարոզելով ժողովրդեան սիր-

տերը պիտի պատրաստէ Քրիստոսը ճանչնալու և անոր հաւատալու համար,, :

Հ. Հրէից կարծիքն ինչպէս էր Քրիստոսի ծննդեան նկատմամբ :

Պ. Այս ամէն հրաշալի յայտնութեանց հետ՝ արդէն մարգարէից գրածներուն ևս նախելով, Հրէայք գիտէին թէ Քրիստոսի աշխարհ գալուն ժամանակը հասած էր, սակայն անոնք կը կարծէին թէ հզօր թագաւորի պէս պիտի յայտնուի, և Հրէից ազգը մարմնաւորապէս պիտի ազատէօտար ազգաց իշխանութեան ձեռքէն :

Հ. Ինչո՞ւ Սուրբ Կոյսը Նազա-

րէթէն Բեթլէհէմ եկաւ :

Պ. Հռովմայեցւոց Օգոստոս կայսրը այն օրերը հրաման հանած էր որ աշխարհագիր ընեն. ուստի հարկ էր որ ամէն մարդ իրեն հայրենի տունը և քաղաքը երթար և իր անունը գրել տար : Յովսէփ և Սուրբ Կոյսն որովհետեւ Դաւիթ թագաւորի ցեղէն էին, Նազարէթէն եկան Բեթլէհէմ քաղաքը. վասն զի այն էր իրենց հայրենիքը, Դաւթին քաղաքը :

Հ. Ո՞ւր ծնաւ Քրիստոս :

Պ. Դաւիթի ցեղէն շատերը կային ամենքն ևս հոն ժողովուած, մեծ բազմութիւն կար Բեթլէհէմի մէջ, ուստի տուները և իջեւանները չէին բա-

ւեր. Յովզէի և Մարիամ
 Կոյսն չկրցան իրենց իջևան մը
 գտնալ. մանաւանդ ազքատ
 էին. ստիպուեցան գիշերը ոչ
 խարաց քարայրի մը մէջ ագա-
 նել. այն տեղը ծնաւ Քրիստոս,
 զոր խանձարրով պատեց Աստ-
 ուածածին և դրաւ անասնոց
 քարէ մսուրին մէջը յարդե-
 րուն և խոտերուն վրայ :



Հ. Քրիստոսի ծննդեան Ժա.

մուն ի՞նչ հրաշք եղաւ :

Պ. Նոյն գիշերը Բեթլէհէմի
 հովիւները դաշտին մէջը ի-
 րենց ոչխարները կը պահպա-
 նէին և արթուն էին, տեսան
 յանկարծ որ երկինքէն մեծ լոյս
 մը ծագեցաւ և հրեշտակ մը
 իրենց քով երեւցաւ. զարհու-
 րեցան հովիւները, բայց հրեշ-
 տակն ըսաւ անոնց. « Մի վախ-
 նաք, աւետիս ձեզ, Փրկիչը
 ծնաւ. գնացէք Բեթլէհէմ, և
 պիտի տեսնաք նորածին մա-
 նուկը խանձարրով պատած
 մսուրին մէջը դրած. նա է Աս-
 տուծոյ Օծեալն, և աշխարհի
 Փրկիչն :

Հ. Ուրիշ ի՞նչ հրաշք եղաւ :

Պ. Աստուած՝ Քրիստոսի ծը-

նունդը աւելի հռչակելու համար՝ նոր ու լուսաւոր աստղ մը երեցուց երկինքը՝ Արեւելեան կողմը, որուն նայելով երեք մոգ թագաւորներ արեւելքէն եկան Երուսաղէմ աստղին առաջնորդութեամբ, և



Բեթլէհէմի մսուրին մէջ գրտնալով նոր ծնած Քրիստոս մանուկը Աստուածածնին գիրկը, երկրպագութիւն ըրին և

ընծաներ մատուցին ոսկի, զըմուռս, և խունկ:

Հ. Ինչո՞ւ Աստուածածին ըզՔրիստոս տաճարը տարաւ:

Պ. Աստուած Մովսէս մարգարէի ձեռքով օրէնք դրած էր որ ամէն առ ջինեկ արու զաւակը ծնանելէն քառսուն օր ետքը Երուսաղէմայ տաճարը տանին Աստուծոյ նուիրեն, և նորէն ետ առնուն իրենց մանուկը՝ մէկ տարեկան գառ մը կամ զոյգ մը աղաւնի ընծայելով տաճարին. Աստուածածին այս օրէնքը կատարելու համար՝ Քրիստոսը տաճարը տարաւ, որ կ'ըսուի Քառասնօրեայ ընծայումն, կամ Տեառն ընդ առաջ. և աղբատ լինելով զոյգ մը ա-

ղաւնի տարաւ տաճարին :

Հ. Միմէօն ծերունին ո՞վ էր :

Պ. Տաճարին մէջն էր Միմէօն ծերունին, որ փափագանօք և աղօթքով խընդրած էր յԱստուծոյ որպէս զի չմեռնիմինչև Քրիստոսը իր աչօք տեսնէ. ելլալ Քրիստոսի դիմաց, և Աստուածածնի գրկէն առնելով մանուկն իւր գիրկը, համբուրեց, և ուրախութեամբ լըցուած ըսաւ. «Տէր, հիմայ թող մեռնիմ, որովհետև իմ աչքս տեսաւ Փրկիչն Քրիստոս, որ հեթանոսաց լոյսն է», ՝ Սուրբ Աստուածածնի ալ դառնալով ըսաւ. «Շատ վիշտեր պիտի կրես դու. և քո Աստուած մանուկ Քրիստոսին անունով շա-

տեր պիտի կորսուին և շատեր պիտի փրկուին», :

Հ. Բեթլէհէմի մանուկները ինչո՞ւ կ'ոտրել տուաւ Հերովդէս :

Պ. Քրիստոսի ծննդեան ժամանակը Հրէից ազգին և աշխարհին վրայ թագաւոր դրուած էր Հռովմայեցւոց ձեռքով Հերովդէս, որ այլազգի էր, ասիկայ մոգերէն իմացաւ Քրիստոսի ծնանիլը ու պատուիրեց որ իրենք երկրպագութիւն ընելէն զկնի դառնան անոր ալ պատմեն. բայց Աստուծոյ հրեշտակը մոգերուն ուրիշ ճամբայ մը ցոյց տուաւ, գնացին. Հերովդէս նեղացաւ մոգերուն վրայ, և մտածելով

Թէ Քրիստոս Հրէից Թագաւոր
 պիտի լինի, ու զէց սպաննել
 տալ, բայց չէր գիտէր Թէ ո՞րն
 է, ուստի հրաման ըրաւ, և
 Քեթիլէհէմի մէջ եղած երկու
 տարեկանէն մինչեւ նոյն օրը
 ծնած մանուկները կոտորեցին,
 այնպէս կարծեց Թէ Քրիստոս
 ալ անոնց հետ սպանուեցաւ :

Հ. Քրիստոս ի՞նչպէս ազատ
 ուեցաւ Հերովդէսի կոտորա
 ծէն :

Պ. Աստուծոյ հրեշտակը յա
 ուջուց Յովսէփին ըսած էր,
 որ ելնէ առնու Քրիստոսը և
 Աստուածածինը և փախչի Ե
 գիպտոս. որով չկրցաւ Հերով
 դէս սպանել զՔրիստոս, և հոն
 կեցան, մինչև Հերովդէս մե

ռաւ. հրեշտակի ազդարարու
 Թեամբ վերադարձան ապա Ե
 գիպտոսէն և բնակեցան Նա
 զարէթ քաղաքը :



Հ. Քրիստոս տասն երկու տա
 րեկան հասակին մէջ ի՞նչպէս
 զարմացոյց Հրէից վարդապետ
 ները :

Պ. Քրիստոսի մայրն և Յով
 սէփ ամէն տարի տօնի օրերը
 Նազարէթէն կուգային Երու
 սաղէմի տաճարը ու խտ ընելու,

Քրիստոս ալ իրենց հետ կը
բերէին: Տասներկու տարու
էր, երբ նոյն տարին ևս եկան
տաճարը. դնաց Քրիստոս նրա
տաւ տաճարին մէջը և Հրէից



վարդապետներուն հետ կը
խօսէր և կը վիճէր Սուրբ Գրոց
վրայ. և որովհետև անոնք կը
կարծէին թէ Յովսէփի տղան
է, ուստի կը զարմանային թէ՛
առանց դաս առնելու ի՞նչպէս

գիտէ այս բաները այս փոքրիկ
հասակին մէջը:

Հ. Յօհաննէսի վարքն ի՞նչպէս
էր:

Պ. Զաքարիայի և Եղիսաբե-
թի որդին Յօհաննէս՝ Հրէաս-
տանի անապատին մէջը ճգնա-
ւորութեամբ մեծցած էր. ար-
դար և սուրբ էր. անոր կե-
րակուրը վայրի մեղր էր և մա-
րախ, և անոր հագուստը՝ ուղ-
տի բուրդ էր: Հողով Սրբով
լի՛ մարգարէ էր, որ կը քարո-
ղէր մարդոց իրենց մեղքերէն
դառնալ, ապաշխարել, մկր-
տուիլ, Քրիստոսի հաւատալ,
և փրկուիլ:

Հ. Քրիստոս երբ եկաւ Յօ-
հաննէսէն մկրտուելու:

Պ. Յօհաննէս Յորդանան գե-
տի եզերքը կը քարոզէր, շատ
մարդիկ կուգային կը խոստո-
վանէին ու կը մկրտուէին, և
իրեն աշակերտներ ունէր: Ա-
հա այս տարին՝ Քրիստոս որ
երեսնամեայ էր, և մինչև այն
ատեն Աստուածածնի քով Յով-
սէփայ տանը մէջ կը բնակէր,
եկաւ Յօհաննէսէն մկրտուե-
լու, որով և իր Աստուածու-
թիւնը ամենուն յայտնուե-
ցաւ:

Հ. Յօհաննու վկայութիւնն
ի՞նչ էր Քրիստոսի համար:

Պ. Յօհաննէս Մկրտիչ՝ Քրիս-
տոսի համար վկայեց ըսելով.
“Ահա՛ գառն Աստուծոյ, որ
բառնայ զմեզս աշխարհի”:

Արդէն ուրիշ անգամ ևս հար-
ցուցեր էին թէ դու չե՞ս Քր-
րիստոս. պատասխաներ էր
թէ՝ “չէ. Քրիստոս եկած է.
ձեր մէջն է. ես անոր ծառայն
եմ”, : Յօհաննէս չուզեց մկր-
տել Քրիստոսը, ըսելով. “Պէտք
է ես քեզմէ մկրտուիմ”, . բայց
Յիսուսի խօսքով յանձն առաւ
ապա մկրտել:

Հ. Քրիստոսի մկրտութեան
ժամուն ի՞նչ հրաշք եղաւ:

Պ. Քրիստոսի մկրտութեան
ժամուն երկինքը բացուեցաւ,
Սուրբ Հոգին Աստուած աղաւ-
նի կերպարանքով Քրիստոսի
վրայ իջաւ, և երկինքէն Հօր
Աստուծոյ ձայնը լսուեցաւ,
որ կ'ըսէր. “Դա իմ սիրելի որ-

դին է, ադոր մտիկ ըրէք, » :

Այս է սուրբ Երրորդու-
թեան յայանու թիւնը, և Քր-
րիստոսի՝ Որդի Աստուծոյ լի-
նելուն վկայութիւնը, այսինքն
Աստուածայայանու թիւնը :

Հ. Քրիստոսի մկրտուիլը ի՛նչ
խորհուրդ ունէր :

Պ. Քրիստոս մկրտուելով
հաստատեց թէ Յօհաննէս
Մկրտչի հաստատած այս կար-
գըն կամ խորհուրդն Աստու-
ծոյ կամքովն է. և Առաքելոց
պատուիրեց որ ամէն նորա-
հաւատ քրիստոնէաները ջրով
մկրտեն յանուն Ամենասուրբ
Երրորդութեան Հօր և Որդ-
ւոյ և Հոգւոյն Սրբոյ, ինչպէս
որ Յորդանանու վրայ յայտ-

նուեցաւ :

Հ. Քրիստոս երբ և ի՛նչպէս
փորձուեցաւ սատանայէն :

Պ. Քրիստոս՝ մկրտուելէն ետ-
քը Անապատը գնաց առանձին
և քառասուն օր ծով պահեց,
և երբոր անօթեցաւ, սատա-
նան եկաւ և փորձելու համար
ըսաւ անոր, « Թէոր դուն Աս-
տուծոյ որդի ես, ըսէ թող այս
քարերը հաց լինին, » :

Հ. Քրիստոս ի՛նչ պատասխա-
նեց սատանային :

Պ. Քրիստոս թէպէտ կարող
էր ընել, բայց սատանային
խօսքը մերժելու համար, և
մարդոց Աստուածասիրու-
թիւն ուսուցանելու համար՝
պատասխանեց. « Մարդը մի-

նակ հացով չապրիր, այլ Աստուծոյ խօսքերով և կամքով կրնայ ապրիլ, : Այո, մենք մինակ հաց ուտելու համար ըստեղծուած չենք :

Հ. Քրիստոսի երկրորդ փորձութիւնն ի՞նչ էր :

Պ. Սատանան լերան մը վրայէն Քրիստոսի ցուցնելով աշխարհիս բոլոր թագաւորութեանց ճոխութիւնը և փափկու թիւնը, ըսաւ անոր. «Թէ որ ինձի երկրպագութիւն ընես, այսինքն Աստուած ուրանալով ինձի պաշտես ու իմ կամքս կատարես, այս ամէնը քեզի կուտամ, :» :

Հ. Քրիստոս ի՞նչ պատասխանեց սատանային :

Պ. Քրիստոս՝ սատանան յանդիմանելով, և մարդոց ուսուցանելու համար թէ պէտք է երկրաւոր և անցաւոր մեծութեանց համար՝ իրենց Աստուածն ուրանան՝ պատասխանեց անոր. «Մարդ պէտք է միայն իրեն Արարիչ Աստուածը պաշտէ, և անոր երկրպագութիւն ընէ, :» :

Հ. Քրիստոսի երրորդ փորձութիւնն ի՞նչ էր :

Պ. Սատանան առաջարկեց Քրիստոսի որ Երուսաղէմի բարձր աշտարակէն զինքը վարձդէ, եթէ որդի Աստուծոյ է՝ անոր վնաս մը չլինիր, որովհետեւ հրեշտակներ պիտի պահպանեն զինքը :

Հ. Քրիստոս ի՞նչ պատասխա-
նեց սատանային :

Պ. Քրիստոս՝ սատանան կըշ-
տամբեելով, և մարդիկը իրա-
տելու համար թէ պէտք չէ
հաւատացեալ մը Աստուած
փորձելու համար այսպիսի ան-
նպատակ բանի համար հրաշք
սպասէ, պատասխանեց անոր.
« Պէտք չէ մարդ իր Աստուածը
փորձէ », :

Հ. Քրիստոսի փորձու թեան
վերջն ի՞նչ եղաւ :

Պ. Սատանան ամօթով մեկ-
նեցաւ, և հրեշտակները մօտ
եկան և կը ծառայէին Քրիստո-
սի : Դարձաւ Քրիստոս անա-
պատէն, և սկսաւ ժողովրդ-
դեան մէջը շրջիլ և Աւետա-



րանը քարոզել :

Հ. Քրիստոս աշակերտներ ու-
նեցա՞ւ :

Պ. Քրիստոսի Աւետարանին
հաւատացողները՝ Քրիստոսի
աշակերտ կ'ըսուէին. անոնցմէ
երկոտասան հոգի ընտրեց Քր-
իստոս որ միշտ իրեն հետ
շրջին, և զանոնք անուանեց
Առաքեալ. ասոնք աղքատ, ան-
ուսումն, բայց հոգւով ու

սրտով քարի մարդիկներ էին :

Հ. Քրիստոսի Առաքելոց անունները ի՞նչ էին :

Պ. Ահա անոնց անունները. Պետրոս, Անդրէաս, Յակոբոս, Յօհաննէս, Փիլիպպոս, Բարդուղիմէոս, Թովմաս, Մատթէոս, Յակոբոս Աւրիեան, Թագէոս, Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի :

Հ. Քրիստոս ի՞նչպէս կը քարոզէր Աստուած պաշտելը :

Պ. Քրիստոս կը քարոզէր որ մարդիկ իրենց Արարիչ Աստուածը ճանչնան, անոր հաւատան, և անոր երկրպագութիւն ընեն հոգւով և ճշմարթեամբ, ու չէ թէ միայն արտաքին ձևերով պաշտեն, ու

մտքով և գաղտնի գործքով հաւառան ընեն :

Հ. Քրիստոս ի՞նչպէս կը քարոզէր Հօր, Իւր և Սուրբ Հոգւոյն Աստուածութիւնը :

Պ. Քրիստոս կը քարոզէր որ հաւատան թէ Հօր Աստուծոյ որդին է ինքն, և մարդոց սիրոյն և փրկութեան համար մարմին առած է : Կը քարոզէր թէ Սուրբ Հոգին՝ Աստուած է. և Հօր Աստուծոյ հաւասար պէտք է հաւատան և երկիրպագանեն մարդիք Որդւոյն Աստուծոյ և Հոգւոյն Սրբոյ : Եւ այս ըսածները կը հաստատէր երբ Աստուածաբար հրաշքներ կ'ընէր Սուրբ Հոգւով :

Հ. Քրիստոս ի՞նչպէս կը քա-

րողէր մարդոց պարտաւորու-
թիւնը :

Պ. Քրիստոս կը քարոզէր որ
մարդիկ աշխարհիս վրայ բա-
րեգործութիւն ընելու հա-
մար ստեղծուած են . և իրար
սիրել, իրարու ներել, գթալ,
օգնել ամէն մարդու պարտա-
ւորութիւնն է . ճշմարիտ խօ-
սիլ, կեղծաւոր չլինել, ուրիշը
չզրկել, ուրիշին երբէք չար չը
կամենալ, չհպարտանալ, և ա-
մէն կերպ մարդկային կատա-
րելութիւն ու առաքինու-
թիւն գործել :

Հ. Քրիստոս մեղաւորաց ի՞նչ
կը քարոզէր :

Պ. Քրիստոս կը քարոզէր . որ-
քան և մեղանչէք, դարձէք

սրտով ապաշխարեցէք, և Հայր
Աստուած կը ներէ ձեզի . պէտք
է հոգւով սուրբ լինինք, Աս-
տուծոյ ողորմութեան ապա-
ւինինք, Աստուծոյ արդարու-
թենէն վախնանք :

Հ. Քրիստոս մեռելոց նկատ-
մամբ ի՞նչ կը քարոզէր :

Պ. Քրիստոս կ'ուսուցանէր
թէ մարդոց բուն հայրենիքը
Նրկինքն է . ուր մեռնելէն
զկնի կ'երթան արդարոց հո-
գիք . և թէ՛ աշխարհիս վերջը
ննջեցեալք յարութիւն պիտի
առնեն, և ամէն մարդոց հո-
գիները պիտի միանան իրենց
մարմնոց հետ Աստուծոյ հրա-
մանաւ :

Հ. Ինչո՞ւ համար յարութիւն

պիտի առնեն :

Պ. Քրիստոս ինքն իւր Աստուածային փառօք դատաստան պիտի ընէ ամէնուն . ապաշխարողները և արդարները Աստուծոյ արքայութիւնը պիտի վայելեն անմահ մնալով . իսկ անզեղջ մեղաւորները յաւիտենական դժոխքին մէջ պիտի չարչարուին :

Հ. Քրիստոս իր քարոզութեան միջոցին հրաշքներ ալ կ'ընէր :

Պ. Քրիստոս թէպէտ Հօր Աստուծոյ կամբք և մարդոց խաղաղութիւն ուսուցանելու , և իրմով փրկութիւն տալու եկած էր աշխարհ , բայց շատ մարդասիրական և մեծամեծ

հրաշքներ ալ գործեց :

Հ. Քրիստոսի գործած հրաշքները ի՞նչ էին :


Պ. Ամեն կերպ ախտ և հիւանդութիւն ունեցողները կը բժշկէր , ցաւագարները կ'առողջացնէր , դիւահարները կ'ազատէր , խուլերուն ականջները կը բանար , համր եղողներուն լեզուն կ'արձակէր , կոյրերը կը լուսաւորէր , կաղերը կը քալեցնէր , անդամալոյծները կը յարուցանէր , ծովուն վրայ կը քալէր , հովերը կը դադրեցրնէր , և մեռելներուն կենդանութիւն կուտար , և այլն :

Հ. Քրիստոսի սպայծառակերպութիւնն ի՞նչպէս եղաւ :

Պ. Քրիստոսի քարոզութիւն



ներով և հրաշքներով շատերը
հաւատացած էին իրեն. բայց



իրեն Առաքելոց աւելի կը
յայտնէր զինքը. որ մը Պետ-

րոս, Յակոբոս և Յոհաննէս աւ-
ռաքեալները հետն առած Թա-
բօր լեռն ելաւ, և հոն պայ-
ծառակերպեցաւ Աստուածա-
յին լուսափայլութեամբ. լու-
սաւոր ամպ մը հովանի եղաւ
և Հօր Աստուծոյ ձայնը նորէն
լսելի եղաւ, որ կ'ըսէր. «Գա-
է որդի իմ սիրելի, դմա լուա-
րուք» : Մովսէս և Եղիա մար-
դարէներն ալ Քրիստոսի քով
կայնած էին և Քրիստոսի հետ
կը խօսակցէին :

Հ. Քրիստոս իր քարոզու-
թիւնները ո՛ւր կ'ընէր :

Պ. Քրիստոս իր քարոզու-
թիւնները և հրաշքները կ'ը-
նէր շրջելով գեղերը և քաղաք-
ները. երբեմն ևս Հրէից տօնի

օրերը Երուսաղէմ քաղաքի
տաճարին մէջը կը քարոզէր և
կը հրաշագործէր :

Հ. Ժողովուրդն ի՞նչպէս ըն-
դունելու թիւն կ'ընէր Քրիս-
տոսի :

Պ. Ամէն տեղ ժողովուրդը
կը սիրէր զինքը . բայց իշխան-
ները և քահանայապետները
կը նախանձէին , վասն զի կեղ-
ծաւոր և չար մարդիկ էին ա-
նոնք :

Հ. Ի՞նչ պատճառաւ կը նա-
խանձէին Քրիստոսի դէմ :

Պ. Քրիստոս կը յանդիմանէր
կեղծաւորներն ու չարերը . Ժո-
ժովուրդն ալ ճշմարտութիւ-
նը հասկնալով՝ օրէ օր կը պա-
ղէր անոնցմէ : Այս եղաւ

գլխաւոր պատճառը , որ Հրէից
քահանաները և փարիսեցի իշ-
խանները խորհուրդ ըրին Քր-
իստոսը մեռցնելու :

Հ. Վերջին անգամ Քրիստոսի
Երուսաղէմ գալը ի՞նչպէս ե-
ղաւ :

Պ. Քրիստոս վերջին օրերը
Գալիլեայէն Բեթանիա գեղն
եկաւ , իր բարեկամ Ղազարո-
սին յարու թիւն տուաւ , որ
չորս օր առաջ մեռած և թա-
ղուած էր . Հրէայք այն օրերը
ամէն կողմէն եկած էին Երու-
սաղէմի տաճարը Չատիկը տօ-
նելու համար . Քրիստոս իր ա-
շակերտաց հետ Բեթանիաէն
Երուսաղէմ եկաւ աւանակի մը
վրայ նստելով , և ժողովուրդը

մեծ բազմութեամբ առ ջևն
 ելաւ . մանուկները ծառերու
 ճիւղեր բռնած , և ծերերը՝
 արմաւենի առած , « Ովսանա ,
 օրհնեալ եկեալ յանուն Տեա-
 ուրն » , կերգէին :

Այս է ծաղկազարդի տօնը :



Հ. Քրիստոս Չատիկն ուր կե-

րաւ և աշակերտաց ի՞նչ ըսաւ :

Պ. Քրիստոս երեք օր ետքը
 իր աշակերտներով մէկտեղ ե-
 րուսաղէմի մէջը վերնատուն
 մը գնաց Չատիկի գառն ուտե-
 լու . շատ սրտառուջ և բարձր
 վարդապետութիւններ խօսե-
 ցաւ իր աշակերտաց . միշտ
 կրկնեց թէ՛ իրար սիրեցէք , և
 աշխարհին սէր քարոզեցէք .
 յայտնեց անոնց թէ ինքն մարդ-
 կանց սիրոյն համար պիտի մատ-
 նուի , կապուի , ծեծուի , խաչ-
 ուի և մեռնի , բայց երեք օ-
 րէն յարութիւն պիտի առնէ :

Հ. Քրիստոս երբ հաստատեց
 հաղորդութեան սուրբ խոր-
 հուրդը :

Պ. Քրիստոս ընթրիքի ժամուն

պատարագի սուրբ հաղորդու-
թեան խորհուրդը հաստա-
տեց. սեղանէն հացը առնելով
և բաժակ մը գինի, գոհացաւ,
օրհնեց և տուաւ իր աշակեր-
տաց, ըսելով. «Այս օրհնեալ
հացն իմ մարմինս է. և այս
օրհնեալ բաժակաւ գինին իմ
արիւնս է», = Ամէնքն ալ մասնա-
կից եղան ճաշակելով այն հա-
ցէն և գինիէն,, =



հ. Ի՞նչ նշանակու թիւն ունի
սուրբ հաղորդութեան խոր-
հուրդը:

Պ. Քրիստոս պատուիրեց իր
աշակերտաց, որ ամէն անգամ
երբ մէկտեղ ժողովին, հացի
և գինեւոյ խորհուրդը կատա-
րեն իր յիշատակին համար. և
այն պիտի լինէր նշան թէ ա-
նոնք հաղորդութիւն ունին
Քրիստոսի հետ՝ անոր մարմինը
և արիւնը ճաշակելով. պատ-
ուիրեց որ ամէն իրեն հաւա-
տացեալներն և սնոյն խորհուր-
դըն ունենան և հաղորդուին
իրեն մարմնոյն և արեան, զոր
կրնուիրէր մարդոց սիրոյն և
փրկութեան համար՝ խաչին վը-
րայ մեռնիլը յանձն առնելով:

Այս խորհուրդն է մեր քահանայից մատուցած սուրբ պատարագը և իր ճաշակած սուրբ հաղորդութիւնը :

Հ. Ընթրիքէն ետքը ի՞նչ ըրաւ Քրիստոս :

Պ. Ընթրիքէն զկնի իւր վերջին սէրն և խոնարհութիւնը յայտնեց, զէնջակը կապելով ջուրը ձեռքը առաւ և ծառայի նման իր աշակերտաց օտնէրը լուաց Աստուածային ձեռքով, օրինակ և խրատ տալով աշակերտաց և բոլոր հաւատացելոց, որ խոնարհ լինին և զերար մինչև այս աստիճան պատուեն :

Հ. Քրիստոսի մատնիչն ո՞վ եղաւ :

Պ. Քրիստոս ասոնք ըսած և ըրած ժամանակ, իր աշակերտներէն մէկը Յուդա Իսկարիով տացին վար իջաւ վերնատունէն և գնաց Հրէից քահանայապետներուն՝ որ նստած խորհուրդ կ'ընէին թէ ի՞նչ պէտք բռնել ու սպաննել պիտի տան Քրիստոսը. Յուդա անոնցմէ երեսուն արծաթ ուղեց, առաւ, և զինուորաց ու խումբ մը Հրէից առաջնորդելով կուգար Քրիստոսը մատնելու :

Հ. Քրիստոս ո՞ւր և ի՞նչպէս մատնուեցաւ :

Պ. Քրիստոս իր աշակերտներով մէկտեղ գնացած էր Պետտեմանի պարտեզը և կ'աղօ-

Թէր. ուղղակի հոն եկաւ Յու-
դա. զինուորաց նշան տուած
էր թէ որն որ ես կը համբու-
րեմ, նա է Յիսուսը. և գնաց
համբուրեց զՔրիստոս :

Հ. Քրիստոս ի՞նչ ըսաւ մատ-
նըչին և անոր հետ եկողնե-
րուն :

Պ. Քրիստոս ըսաւ. ո՞վ Յու-
դա, համբուրելով կը մատնես
զիս. ապա դարձաւ եկողնե-
րուն ըսաւ. Ես եմ Յիսուս :
Անոնք ետ ետ փախան և գե-
տինը ինկան. նորէն կրկնեց Քր-
իստոս, թէ՛ Ես եմ Յիսուս.
և եկան բռնեցին զինքը իր կա-
մաւ :

Հ. Քրիստոսի բռնուած ժա-
մուն աշակերտներն ի՞նչ եղան :

Պ. Քրիստոսի բռնուած ա-
տենը, աշակերտները թողին
ու փախան. միայն Պետրոս և
Յոհաննէս առաքեալները հե-
ռուանց ետեէն կ'երթային :



Հ. Քրիստոսը բռնելով ո՞ւր
տարին, և Պետրոս Առաքեալն
ի՞նչ ըրաւ :

Պ. Քրիստոս մահապարտի մը
պէս զինուորներէն կարանա-
ւորուած տարին Աննա և Կայի-

ախայ քահանայապետաց ատեանը , ուր Պետրոս Առաքեալն ուրացաւ զՔրիստոս , և ապա դառնապէս զղջարով լացաւ :



Հ. Քահանայապետաց ատենէն հանելով ո՛ւր տարին Քրիստոսը :

Պ. Քրիստոսը կապեցին և բանտը գրին մինչև առաւօտեղաւ . ապա տարին Հռովմայեցի Պիղատոս դատաւորին ,


և Պիղատոս Հերովդէսին զըրկեց : Չար և դաժան զինուորներէն շատ չարչարանք և նախատինք կրեց Քրիստոս . ՚ի վերջոյ Պիղատոս վճիռ տուաւ որ խաչեն :

Հ. Քրիստոսի վրայ ի՞նչ յանցանք գրեր էին :

Պ. Քրիստոսը ամբաստաներ էին Հրէաները , թէ՛ ինքզինքը թագաւոր կ'անուանէ . ուստի և Պիղատոս տախտակի մը վրայ գրել տուաւ քանի մը ազգաց գրերով « Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից » . և այս գրուածը դնել տուաւ խաչին վրայ :

Հ. Քրիստոս ի՞նչպէս կը տանէին Գողգոթայ խաչելու :

Պ. Քրիստոսի խաչափայտը
ծանր էր, և զայն իր ուսերուն



վրայ կը տանէր ինքն մինչև Գող-
գոթայ. հոն խաչին վրայ բե-

ւեռեցին Քրիստոսի ձեռները
և ոտները, և Քրիստոսի աջ
ու ձախ կողմերը երկու աւա-
զակ մարդիկ ալ խաչեցին :

Հ. Քրիստոս խաչին վրայ ե-
ղած ժամանակ որո՞նք կային
ներկայ :

Պ. Քրիստոսի խաչափայտին
փարեւով կսկծաւով կուլար Աւ-
տուածածին. հոն էին և քանի
մը բարեպաշտ կանայք և Յո-
հաննէս Առաքեալն. Քրիստոս
իր ցաւոց մէջը կը մխիթարէր
զանոնք, մանաւանդ իր մայրը,
զոր յանձնեց Յոհաննէս Առա-
քելոյն խնամոց : Չինքը խաչո-
ղաց համար աղօթեց. աջա-
կողմեան աւազակը խաչին վը-
րայէն հաւատաց Քրիստոսի,

և Քրիստոս ըսաւ անոր. «Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին», :

Հ. Քրիստոս ո՞ր օրը խաչեցաւ, և ի՞նչպէս մեռաւ :

Պ. Քրիստոսի խաչելու թեան օրը ուրբաթ էր. ցերեկուան իններորդ ժամուն իր հոգին աւանդեց Հօր Աստուծոյ ձեռքը. և Աստուածային զօրութեամբ դժոխքն իջնալով, նահապետաց և արդարոց հոգիները սատանայի իշխանութենէն ազատեց :

Հ. Քրիստոսի մեռած ժամուն ի՞նչ հրաշքներ եղան :

Պ. Քրիստոս հոգին աւանդած ժամուն, յանկարծ երկիրը շարժեցաւ, արեւը խաւարեցաւ, տաճարին վարագոյրը

պատուեցաւ, քարերը ճեղքը ուեցան, գերեզմանները բացուեցան, և շատ սրբոց մարմինները յարութիւն առին :

Հ. Քրիստոսի կողը ո՞վ նիզակաւ ծակեց :

Պ. Քրիստոս արդէն մեռած էր, անոր կողը նիզակաւ ծակեց զինուորներէն մէկը, և արիւն ու ջուր հոսեցաւ. զինուորաց հարիւրապետն և զինուորները՝ եղած հրաշքը և այս բանը տեսնալով, աղաղակեցին թէ՛ «Արդարեւ որդի Աստուծոյ է սա», :

Հ. Քրիստոս որո՞ւ ձեռքով և ո՞ւր թաղուեցաւ :

Պ. Քրիստոսի մարմինը խաչէն վար առնել տուաւ և մաքուր

կտաւ ով պատել տուաւ Յովսէփ Արեմաթացի բարեպաշտ իշխանը, և իրեն համար պարաստել տուած վիմափոր գերեզմանին մէջը թաղեցին:



Հ. Քրիստոսի գերեզմանին վրայ ի՞նչ հսկողութիւն ըրին:
 Պ. Քրիստոսի գերեզմանը կրնաբեցին Հրէից քահանայապետները և զինուորներէն պահան պան կայնեցուցին: Հետեւեալ

գիշերը երբ շաբաթն անցեր էր, գիշերը առաւօտեան գէմ Քրիստոսի հաւատացեալ քանի մը բարեպաշտ կանայքը, որոց հետ էր նաև Մարիամ Մագդաղենացին, եկան Քրիստոսի գերեզմանը լայով, և իրենց հետ անուշահոտ իւղ, և խուսկ բերած էին ծխելու համար:

Հ. Ի՞նչպէս եղաւ Քրիստոսի յարութիւնը:

Պ. Քրիստոս յարութիւն առած էր այս ժամուս. վասնզի երկնից երկու հրեշտակ իջած էին, գերեզմանը բացեր, և մէկը գլխուն կողմն, ու միւսը ոտքերուն կողմը նստեր էին: Պահապան զինուորները սար

սասիերով փախեր էին անկէ և
գնացեր պատմեր էին քահա-
նայապետներուն :



Հ. Իւզաբեր կանայք ինչպէս
խնայան Քրիստոսի յարուժիւ-
նը :

Պ. Քրիստոսի յարուժիւնը
աւետեցին հրեշտակները իւ-
զաբեր սուրբ կանանց, և Քր-
իստոս ինքն երեցաւ Մարիամ
Մագդաղենացւոյն : Այս սուրբ

կանայք վազեցին աւետեցին
Առաքելոց, և Պետրոս ու Յո-
հաննէս Առաքեալք վազեցին
գերեզմանը . Քրիստոս իր Ա-
ռաքելոց երեցաւ, և անոնք
ուրախութեամբ լցան :

Հ. Քրիստոս թովմաս Առա-
քելոյն ալ երեցաւ :

Պ. Քրիստոս իր Առաքելոց ե-
րեցած ժամանակը թովմաս Ա-
ռաքեալը անոնց մէջը չէր, երբ
որ պատմեցին թովմասին, թով-
մաս ըսաւ. «Մինչև ես իմ ա-
ջօքս չտեսնամ, և անոր բեւե-
ռով ծակուած ձեռքն ու ոտքը
և կողը չըօջախեմ, չեմ հաւա-
տար » : Եւ Քրիստոս նորէն
երեցաւ . թովմաս տեսաւ, շօ-
ջախեց և հաւատաց, աղաղա-

կելով «Տէր իմ և Աստուած իմ», :

Հ. Քրիստոս յարութեանէն ետքը ի՛նչ խօսեցաւ Առաքելոց :

Պ. Քրիստոս յարութեանէն զկնի քառասուն օր մնաց աշխարհի վրայ. Առաքելոց կրրկնեց իր վարդապետութիւնները. քաջալերեց զանոնք, և պատուիրեց որ իր համբառնալէն զկնի Սուրբ Հոգին պիտի առաքէ, որով պիտի իմաստնանան և զօրանան, և սկսին Աւետարանը քարոզել և հաւատացեալները մկրտել յանուն Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. խոստացաւ որ մինչ

չեւ աշխարհի վերջ իր հաւատացելոց հետ պիտի լինի ինքն :

Հ. Քրիստոս ի՛նչպէս համբարձաւ յերկինս :

Պ. Քրիստոս՝ յարութեան քառասներորդ օրը Առաքեալները հետն առած Չիթեանեաց լեռը գնաց, և իր Աստուածային ձեռքը դնելով անոնց գլխուն վրայ օրհնեց զանոնք. որով հաստատեց ձեռնադրութեան խորհուրդը : Ապա լուսեղէն ամպով յերկինս համբարձաւ : Նոյն տեղը հրեշտակներ երեցան և Առաքեալներուն ըսին. «Այս Յիսուս որ վերացաւն ՚ի ձէնջ, սոյնպէս եկեսցէ», որ վերջին դատաստանի ատեն գալուն

Համար կ'ըսէին:



Հ. Քրիստոսի Համբառնալէն
Ետքը Առաքեալներն ի՛նչ ը-
րին:

Պ. Քրիստոսի Առաքեալները
գարձան Երուսաղէմ, և միա-
բան ժողովելով վերնատան մէ-
ջը՝ սուրբ Աստուածածնի և
միւս բարեպաշտ կանանց հե-
տը կ'աղօթէին և կ'սպասէին
Սուրբ Հոգւոյն գալտեան: Եւ

վիճակաւ Մատթիա Առա-
քեալն՝ ընտրեցին Յուդային
տեղը, որով լրացաւ Առաքե-
լոց տասներկու թիւը:

Հ. Ո՞ր օր և ի՛նչպէս եկաւ
Սուրբ Հոգին:

Պ. Քրիստոսի Համբառնալէն
տասն օր ետքը, կիրակի, որ
Հրէից Եգիպտոսէն ելելուն
յիսներորդ օրն էր, և Սի-
նայ լեռան վրայ Մովսէս մար-
գարէին ձեռքով տասնաբան
եայ օրէնքն ընդունելուն մեծ
տօնը, որ կ'ըսուի Պէնտէկոս-
տէ, շատ հեռաւոր երկիրնե-
րէ Հրէաներ եկած էին Երու-
սաղէմ այս տօնին օրը. յան-
կարճ շարժ եղաւ, և Առա-
քեւոց նստած տունը հողմով

ու լուսով լեցուեցաւ . Սուրբ
Հոգին իջաւ վերնատունը և
հրեղէն լեզուի նման Առաքե-
լոց ամէն մէկին վրայ նստեցաւ :



Դ. Մ Ա Ս Ն

Հ. Առաքեալք Սուրբ Հոգին
ընդունելով ի՞նչ եղան :

Պ. Քրիստոսի Առաքեալները՝

որ յառաջ շատ կը վախնային
Հրէից առջև երևնալու և խօ-
սելու , յանկարծ զօրութիւն
մը զգեցան , իմաստութեամբ
լցան , և այլ և այլ ազգաց լե-
զուներով սկսան խօսիլ : Յան-
կարծակի շարժումն և լոյսը
տեսնալով՝ Առաքելոց եղած
տեղը վազեր էին Հրէաները
մեծ բազմութեամբ . և մեծաւ
զարմացմամբ կ'սքանչանային
երբ կը լսէին Գալիլեացի տղէտ
Առաքելոց բերնէն այլ և այլ
ազգաց լեզուով քարոզու-
թիւնները :

Հ. Ի՞նչ կը քարոզէին Առա-
քեալները :

Պ. Քրիստոսի Աստուածու-
թիւնը և անոր յարութիւնը

կը քարոզէին Առաքեալները ,
 և իրենց խօսքերուն վկայու-
 թիւն կը բերէին մարդարէից
 առաջուց ըսածները . այնպէս
 որ բոլոր ըսողները կը համոզ-
 ուէին , և հազարաւոր հոգի-
 ներ կը հաւատային Քրիստոսի .
 միայն Պետրոս Առաքելոյ մէկ
 քարոզութեամբ երեք հազար
 անձինք հաւատացին :

Հ. Առաքեալները ի՞նչ կար-
 գով կը կառավարէին հաւա-
 տացեալները :

Պ. Քրիստոսի հաւատացեալ-
 ները Առաքելոց ձեռքով կը
 մկրտուէին , և Աւետարանի
 պատուէրները կ'ընդունէին .
 իրենց ունեցածները կը բերէին
 կը յանձնէին Առաքելոց , և Ա-

ռաքեալք ամենայն ինչ հասա-
 րակաց հաւասար կերպով կը
 մատակարարէին . և օրէ օր
 հաւատացելոց թիւը կ'աւել-
 նար : Առաքեալներն համար-
 ձակ կ'երթային Հրէից տաճա-
 րին մէջ Աւետարան կը քարո-
 ղէին , և Քրիստոսի անունով մե-
 ծամեծ հրաշքներ կը գործէին :

Հ. Հրէից քահանայապետնե-
 րը և իշխանները ի՞նչպէս կը
 վարուէին Առաքելոց հետը :

Պ. Քրիստոսի թշնամիները ,
 Հրէից քահանայապետները և
 իշխանները սաստիկ կը չարա-
 նային , և շատ անգամ Առա-
 քեալները կը բռնէին , կը ծե-
 ծէին , շղթայներով կը կապե-
 ին . բայց անոնք կը համբերէին

և հրաշիւք կը փրկուէին, և միշտ կը քարոզէին :



Հ. Քրիստոսի առաջին նահա-
տակն ո՞վ եղաւ :

Պ. Քրիստոսի համար առաջին նահատակն եղաւ սուրբ Ստեփաննոս, զոր քարկոծեցին Հրէաները. և նա ծուռնկի վրայ գալով ներողութիւն կը խընդրէր երկինքէն զինքը քարկոծողներուն, և կը տեսնէր «Նրկինքը բացեալ և Քրիստոս ընդ աջմէ Հօր նստեալ», :

Հ. Հրէայք ուրիշ ի՞նչ հալածանք ըրին :

Պ. Հրէայք օրէ օր աւելի հալածանք կը հանէին Քրիստոսի Առաքելոց և հաւատացելոց վրայ, սակայն անոնք աւելի կը զօրանային և կը շատնային : Հրէայք շերտիտէսին ձեռքով Զեբեդեայ Յակոբոս Առաքելոյն գլուխը կտրել տուին, և

այս հալածող Հրէից մէջ ա-
մենէն խիստ էր Սօղոս անու-
նով Տարածնեցի մէկը :

Հ. Պօղոս Առաքեալ ի՞նչպէս
հաւատաց Քրիստոսի :

Պ. Քրիստոս Սօղոսին երեցաւ
երկնացին լուսով, երբ որ Սօղոս
Հրէից քահանայապետէն հրա-
մանագիր առած կ'երթար Դա-
մասկոս քաղաքը Քրիստոսի
հաւատացեալները հալածելու
և չարչարելու, Սօղոսին ձայ-
նեց Քրիստոս և ինք զինքը
յայտնեց. և այնուհետև ոչ
միայն ինքն հաւատաց Քրիս-
տոսի, այլ և Առաքեալներէն
աւելի մարդիկ և ազգերը քա-
րոզելով հաւատացուց, և հա-
լածիչ Սօղոսն եղաւ Առաքեալ

Պօղոս :

Հ. Քրիստոնէութիւնը ի՞նչ
պէս տարածեցաւ հեռու եր-
կիրները :

Պ. Քրիստոսի հաւատացեալ
ժողովուրդը շատ բազմացաւ
ամէն տեղ. Հրէայք սկսան
Առաքեալները և հաւատա-
ցեալները Երուսաղէմէն հա-
լածել հեռու տեղեր, անոնք
ուր որ գնացին, Քրիստոսի Ա-
ւետարանը քարոզեցին, եկե-
ղեցիներ հաստատեցին. և Պօ-
ղոս Առաքեալ Քրիստոսի հա-
ւատացեալները անուանեց Քր-
իստոնեայ :

Հ. Քրիստոսի եկեղեցին ի՞նչ
պէս հիմնուեցաւ :

Պ. Քրիստոսի Առաքեալները

եկեղեցի հաստատելով զանա-
զան տեղեր, եկեղեցւոյ պաշ-
տօնեայները ձեռնադրեցին,
այն է սարկաւազ, քահանայ և
եպիսկոպոս. կանոններ հաս-
տատեցին կիրակի օրերը սուրբ
պահելու, Սուրբ Գիրքը կար-
դալու և բացատրելու, սուրբ
պատարագ մատուցանելու և
արժանաւորները հաղորդելու,
խոստովանելու, ապաշխարե-
լու, մկրտուելու, սուրբ իւ-
ղով օծելու, յԱրևելս աղօ-
թելու, խաչակնքելու և ծունր
դնելու, պահք պահելու, ա-
մուսնական խորհուրդը սրբ-
բու թեամբ ուխտելու և օրհ-
նելու :

Հ. Արժօնք գրեցին Սուրբ Ա-

ւետարանը և Առաքելական
Թուղթերը :

Պ. Քրիստոսի Աւետարանը
գրեցին չորս սրբազան Աւե-
տարանիչները՝ Մատթէոս,
Մարկոս, Ղուկաս և Յօհան-
նէս: Պօղոս Առաքեալը իր թրղ-
թերը գրեց. և Պետրոս, Յօ-
հաննէս, Յակոբոս և Յուդա
Առաքեալները Կաթողիկեայց
չորս թղթերը գրեցին. և Ղու-
կաս գրեց Գործք Առաքելոց :
Այս գրուածքները համարուե-
ցան հիմն և կանոն Քրիստո-
նէական եկեղեցւոյն, և Աստ-
ուածաշունչին հետ կցորդուե-
լով ըսուեցան Նոր Կտակարան:

Հ. Քրիստոսի եկեղեցւոյ կար-
դադրու թիւնը ինչպէս կ'ընէ-

ին Առաքեալները :

Պ. Քրիստոսի եկեղեցւոյ համար Առաքեալները կը ժողովէին Երուսաղէմ, և միաբան աղօթութիւք Սուրբ Հոգւով կ'որոշէին ինչ և իցէ խնդիր : Եպիսկոպոսները և քահանաները կ'ընտրուէին հաւատացելոց կողմէն, և կը ձեռնադրուէին Առաքեալներէն, որ կը համարուին եկեղեցւոյ պաշտօնեայ և Առաքելոց յաջորդ :

Հ. Սուրբ Աստուածածնի վերափոխումն ինչպէս եղաւ :

Պ. Քրիստոսի համբառնալէն տասներկու տարի ետքը սուրբ Աստուածածին իր հոգին աւանդեց. նոյն օրը ժողովեալ էին Երուսաղէմ բոլոր Ա-

ռաքեալք. հոգևոր երգօք և օրհնութեամբ Աստուածածնի մարմինը թաղեցին. բայց ՚ի ձեռնն հրեշտակաց անոր Աստուածաբեալ սուրբ մարմինը վերափոխեցաւ յերկինս : Այսպէս կ'ընդունին և կը տօնեն ամենայն եկեղեցիք ուղղափառաց :



Հ. Մեր Հայոց ազգը երբ ընդունեց քրիստոնէութիւնը :

Պ. Ամէն հեթանոս ազգերէն առաջ մեր ազգը քրիստոնեայ եղաւ թագէոս Առաքելոյ ձեռքով, որ մեր Աբգար թագաւորի հիւանդութիւնը բժրշկեց, և թագաւորի ընտանիքը, նախարարները և ժողովուրդը քարոզեց ու մկրտեց, եկեղեցիներ շինեց Հայաստանի Եդեսիա, Շաւարշան, Սիւնիք, Աղուանք, Կեսարիա, և այլ տեղեր. եպիսկոպոս ձեռնադրեց Ադդէ, Թէոփիլոս, Զաքարիա և այլն. և ինքն նահատակուեցաւ Սանատրուկ թագաւորէն Շաւարշանայ մէջ:

Հ. Ուրիշ Առաքեալներ ալ եկան Հայաստան:

Պ. Բարդուղիմէոս Առաքեա-

լը, որ Հոգեաց վանքը հիմնեց Անձևացեաց գաւառի մէջը, և շատ եկեղեցիներ շինեց, քահանաներ ձեռնադրեց, և նահատակուեցաւ Արեբանոս քաղաքի մէջը Սանատրուկի ձեռքով:

Հ. Միթէ Սանատրուկ քրիստոնեայ չէր:

Պ. Քանի որ Աբգար չէր մեռած, Սանատրուկ քրիստոնեայ էր, վերջը ուրացաւ և շատ հալածանքներ հանեց Հայ քրիստոնէից վրայ, շատերը մարտիրոսեց: Ասոր ձեռքով նահատակուեցաւ իւր աղջիկը սուրբ Սանդուխտ Կոյսն, իւր բոյրը Ոգուհին, և այլ շատերը. բայց քրիստոնէից թիւը

միշտ կ'աճէր և ամէն կողմը լե-
ցուն էին յայտնի և ծածուկ:

Հ. Սուրբ Ոսկեանք և Սու-
քիասեանք ո՞յք են:

Պ. Սուրբ Ոսկեանք Հռովմա-
յեցի էին, որ գետապան եկած
էին Հռովմայեցւոց կայսեր
կողմէն Սանատրուկի քով, ա-
շակերտեցան Թագէոս Առա-
քելոյն և մնացին Հայաստանի
մէջ: Իսկ Սուքիասեանք Արա-
նաց ազգէն էին, Հայոց Սաթի-
նիկ Թագուհւոյն ազգականնե-
րը, որք Ոսկեանց ձեռքով քրիս-
տոնեայ եղան: Ոսկեանք և Սու-
քիասեանք նահատակուեցան
Արտաւազգ Բ. Թագաւորէն:

Հ. Սուրբ Հռիփսիմեան կու-
սանք ո՞յք են:

Պ. Հռովմայեցի քրիստոնեայ
կոյսեր էին, որոց գլխաւորի ա-
նունը Գայիանէ էր. Գիովղե-
տիանոս կայսրը հալածանք հա-
նեց անոնց դէմ. Հռովմէն Հա-
յաստան փախան, իրենց հա-
ւառքը պաշտելու համար, ո-
րոց մէջ ամենէն առաքինին էր
սուրբ Հռիփսիմէ կոյսն, և նա
հատակուեցան Տրդատ Թա-
գաւորէն Վաղարշապատու-
մէջ: Վարազայ խաչը, որ
Քրիստոսի խաչափայտի մասն
է, սուրբ Հռիփսիմէն բերած
է Հայաստան:

Հ. Հայոց եկեղեցւոյ հալա-
ծանքը երբ գաղբեցաւ:

Պ. Երբ Տրդատ Թագաւոր
սուրբ Գրիգոր Լուսաւորչի

ձեռքով և մեծամեծ հրաշքներով բժշկուեցաւ և քրիստոնէայ եղաւ, բոլոր Հայաստան լուսաւորուեցաւ, կուռքերը և կռատունները կործանուեցան, ամէն տեղերը վանք և եկեղեցիներ շինուեցան, մարտիրոսաց վկայարանները և գերեզմանները ուխտատեղի դարձան, Քրիստոսի խաչին նշանը պայծառացաւ և պաշտելի դարձաւ, եպիսկոպոսներով, կրօնաւորներով, քահանաներով Հայաստանը լեցուեցաւ:

Հ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ որմէ՞ ձեռնադրուեցաւ:

Պ. Կեսարիոյ սուրբ Ղեւոնդ Հայրապետէն, որ Թաղէոս Առաքելոյ ձեռնադրած Թէոփի-

լոս եպիսկոպոսի յաջորդներէն էր: Սուրբ Ղեւոնդ ընծայ տուաւ Լուսաւորչին սուրբ Կարապետի մարմինը և Աթանազինէ հայրապետին մարմինը, որ բերաւ ի Մուշ, և Գիսանեանց կռատունը կործանելով, հոն դրաւ այս սրբոց նշխարները, և մեծ վանք ուխտատեղի շինեց հոն, որ է Մշոյ սուրբ Կարապետի վանքը:

Հ. Ուրիշ ինչ ըրաւ Լուսաւորիչ:

Պ. Տրդատ Թագաւորը և բոլոր ժողովուրդը Եփրատ գետին մէջը մկրտեց. Եփրատայ ափանց քով սուրբ Յօհաննու տաճարը շինեց, ապա Վաղարշապատու մայր տաճարը հիմ-

նարկեց, որոյ ձևը Քրիստոս
ցոյց տուած էր տեսիլքով,
այն է սուրբ Էջմիածին: Քրիս-
տոնէնու թիւնը ուսուցանելու
համար վարժարաններ բացաւ,
Հայոց կուսապաշտ բուրմերու
որդիքը կրթեց և եպիսկոպոս,
քահանայ ձեռնադրեց, պահոց
և տօնի օրերը սահմանեց, ե-
կեղեցական կարգեր և կանոն-
ներ դրաւ. ինքն անձամբ այ-
ցելու թեան կը շրջէր ամէն
կողմը, կը քարոզէր, կը մխի-
թարէր, կ'ուզզէր: Յաճախա-
պատուժ գիրքը գրեց, որ ճա-
ռեր և վարդապետութիւններ
են քրիստոնէութեան հաւա-
տոյ վրայ: Լուսաւորչի վար-
դապետութիւնները և մեր

ազգի դարձը գրեց Ադաթան,
գեղոս՝ դպիր Տրդատ թագա-
ւորին:

Պ. Սուրբ Գրիգոր Լուսա-
ւորչին ո՞վ յաջորդեց:

Պ. Լուսաւորիչ երբեմն կը
շրջէր ժողովրդոց մէջ և եր-
բեմն կ'առանձնանար լեռները
աղօթելու և ճգնելու. ուստի
Տրդատ թագաւոր և նախա-
րարք և ժողովուրդք ազա-
չեցին իրեն, իւր հաճու-
թեամբը իւր որդին սուրբ Ա-
րիստակէս կաթողիկոս կար-
գեց, և ինքն Սեպուհ լեռը
Մանեայ այրը ըսուած քարայ-
րին մէջը ճգնելով մեռաւ:

Հ. Հաւատոյ հանդանակը երբ
բերուեցաւ Հայաստան:

9. Նիկիա քաղաքին մէջ ժողոված երեք հարիւր տասն և ութը հայրապետաց հետ հըրաւիրուած էր մեր սուրբ Լուսաւորիչն ևս. բայց նա սուրբ Արիստակէսը զրկեց իր կողմէն, որ Հաւատոյ Հանգանակն առաւ բերաւ, և սուրբ Լուսաւորիչ ալ անոր վրայ աւելցուց, «Իսկ մէք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեան և միոյ Աստուածութեան Հօր և Արդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն», :

4. Արդիք և թողունք սուրբ Լուսաւորչի ոյք են :

9. Սուրբ Արիստակէս և Վրթաթանէս, Գրիգորիս և Յուսիկ Վրթաթանէս յաջորդեց իւրեզբօր Արիստակէսին, և Վրթանէսի որդին Յուսիկ յաջորդեց իւր հօրը. Վրթանէսի փոքր որդին սուրբ Գրիգորիս եղաւ Վրաց և Աղուանից կաթողիկոս, և նահատակուեցաւ ու թաղուեցաւ Աղուանից Ամարաս աւանը : Սուրբ Յուսիկն ուրացող Յուլիանոսի պատկերը ոտքի տակ առաւ փչրեց, որ կախել տուած էր կեղեցւոյ մէջ և պաշտել կուտար. ասոր համար Տիրան թագաւորէն բրածեծ լինելով նահատակուեցաւ : Սուրբ Յուսիկան յաջորդեց ծերունին Ռա-

նիէլ. նա ալ Տիրանին ձեռքով
մեռաւ :

Հ. Ո՞վ է մեծն Ներսէս :

Պ. Մեծն Ներսէս սուրբ
Յուսկան թոռն է, որ եղաւ
կաթողիկոս Հայոց. շատ վան-
քեր և տաճարներ հիմնեց,
հիւանդանոց, աղքատանոց, օ-
տարաց իջևան, որբոց և այ-
րեաց ապաստանարան, վար-
ժարան, և այս ամէն հաստա-
տուածեանց համար ժողովրդ-
դեան տուրքեր սահմանեց
պտղի անուամբ: Շատ բարե-
կարգութիւններ բրաւ, եկե-
ղեցական կանոններ սահմա-
նեց, և մեր ազգի թագաւո-
րութեան ալ մեծ պաշտպա-
նութիւն և օգուտ բրած է:

Հ. Ո՞վ է սուրբ Սահակ Պար-
թեւ :

Հ. Սուրբ Սահակ Պարթեւ
Մեծին Ներսէսի որդին և անոր
յաջորդն է, որ գործակցու-
թեամբ սուրբ Մաշտոց Մես-
րոբ վարդապետին Հայոց գիրը
յօրինեցին. վարժարաններ բա-
ցին, շատ աշակերտներ հա-
սուցին, որ Թարգմանիչք կ'ըս-
ուին. ասոնց ձեռքով Հին և
Նոր կտակարանը յուներենէ
հայերէն թարգմանուեցան,
և այլ շատ մը եկեղեցւոյ հարց
գրքեր թարգմանեցին, շարա-
կանները յօրինեցին, տօնա-
ցոյց և ծիսարան շինեցին, որ
սուրբ Մեսրոբի անուանով կը
կոչուի Մաշտոց, շատ եկեղե-

ցական կանոններ գրեցին, և այլն:

Հ. Եկեղեցական քանի՞ ժողով կ'ընդունի մեր եկեղեցին:

Պ. Եկեղեցական տիեզերական ժողովներէն միայն երեքը կ'ընդունի. Ա. Նիկիոյ ժողովըն, որ եղած է Քրիստոսի երեք հարիւր քսանուհինգ թրուին, սուրբ Գրիգոր Լուսաւորչի օրով. Բ. Կոստանդնուպօլսոյ ժողովն, որ եղած է Քրիստոսի երեք հարիւր ութսունումէկ թուին, սուրբ Ներսէսի Մեծին օրով. Գ. Եփեսոսի ժողովն, որ եղած է Քրիստոսի չորս հարիւր երսունումէկ թուին սուրբ Սահակայ Պարթեւի օրով:

Հ. Սուրբ Ղեւոնդեանք և Վարդանեանք ո՞յք են:

Պ. Մեծին Ներսէսի, սրբոյն Սահակայ և Մեսրոբայ ջանքերը եթէ չը լինէին, և եթէ հայերէն գիր չհնարուէր ու Աստուածաշունչ չթարգմանուէր, վտանգ կար որ Հայերը Յունաց եկեղեցւոյ հետ միանալով հայկական եկեղեցին անհետանար. և ասոր համար ալ Յոյները շատ ջանքեր քած են. միւս կողմէն ալ Պարսիկները՝ որ կրակապաշտ էին, սաստիկ բռնութիւն և խորամանկութիւն ՚ի գործ կը դնէին, որ Հայերը կրակապաշտ ընեն և իրենց հետը խառնելով Հայոց ազգը կըլլեն: Թարգ-

մանչաց շնորհիւ Յոյներէ ազա-
 տած էինք . բայց Պարսիկը պա-
 տերազմով կ'ուղէր իր կամքը
 կատարել : Սուրբ Ղեոնդ Ե-
 րէց և Յովսէփ կաթողիկոս որ
 թարգմանչաց աշակերտներ է-
 ին , գլուխ հանդիսացան Հա-
 յոյ , իրենց հետն ունենալով
 սուրբ Վարդան Մամիկոնեան
 և ուրիշ քաջ և սուրբ նա-
 խարաքք , եկեղեցականք և ժո-
 զովուրդք , խաչով և սրով , ա-
 լետարանով և աղեղով ճակա-
 տեցան Պարսից զէմ , յանձն
 առին մահ , կապանք , գերու-
 թիւն , եկեղեցւոյ և հաւատոյ
 համար , բայց իրենք ալ ահա-
 դին կոտորած տուին Պարսկին .
 սուրբ Վարդան հազար եր-

սունուվեց ընկերով նահատա-
 կուեցաւ , և Ղեոնդեանք կա-
 պանօք և չարչարանօք մարտից
 ըոսացան , որոց արեամբ եկե-
 ղեցին խաղաղութիւն և հաս-
 տատութիւն գտաւ :

Հ. Սուրմակ , Բրգիչոյ և Շմու-
 էլ ոյք են :

Պ. Անարժան և չարաբարոյ
 եկեղեցականներ , որ իրենց
 մատնութեանց և չարախօսու-
 թեանց համար Պարսիկներէն
 կաթողիկոս դրուեցան մեր ազ-
 գին վրայ սուրբ Սահակայ օ-
 րով և անկէց ետքը , և իրենց
 ազահութեան համար եկեղե-
 ցին և ժողովուրդը շատ տա-
 ուապեցուցին :

Հ. Մեր կաթողիկոսական ա-

Թուր միշտ մնաց Վաղարշապատ :

Պ. Ոչ, այլ Քրիստոսի չորս հարիւր յիսուներկու թըուականին փոխադրուեցաւ Դուին քաղաք, և այլ քաղաքներ. Բազրատունեաց թագաւորութեան ժամանակը՝ Անի քաղաքը, ապա Հռոմկլայ, ապա Սիւ, և դարձեալ Վաղարշապատ, Էջմիածին, ուր կայ մինչև ցայսօր :

Հ. Սուրբ Սահակէն և Մեսրոբէն զկնի որոնք եղան նշանաւոր եկեղեցականները մեր եկեղեցւոյ մէջ :

Պ. Սուրբ Թարգմանչաց աշակերտներէն սկսեալ գլխաւորներն ասոնք են, Մովսէս Խո-

րենացի, որ Հայոց քաղաքական և եկեղեցական պատմութիւնը գրեց, Ճառեր և շարականները յօրինեց, Եզնիկ Կողբացի, Մամբրէ Վերձանող, Դաւիթ Անյազթ, Յօհան Մանգակունի, որ ժամագրքի ազօթքները գրեց, Եղիշէն՝ որ Ճառեր և Վարդանանց պատմութիւնը գրեց, Ղազար Փարպեցի, Ստեփաննոս Ա. Սիւնեցի Երգաբան, Աբրահամ Եպիսկոպոս, Պետրոս Սիւնեցի Քերթող, Յօհան Մամիկոնեան, Դաւիթ Փիլիսոփայ, Անանիա Շիրակացի, Թէոդորոս Քաթենաւոր, Մովսէս Սիւնեցի Քերթող, Գրիգոր Արշարունի, Սահակ Գ. կաթողի-

կոս, Մովսէս Կաղկանդուացի,
 Յօհաննէս Օձնեցի, Ստեփան-
 նոս Բ. Միւնեցի, Զաքարիա
 Կաթողիկոս, Համամ, և այլն,
 մինչև ութ հարիւր ութսու-
 նուհինգ թուականն Քրիստո-
 սի:

Հ. Այդ միջոցները Հայոց ե-
 կեղեցւոյ նահատակները զբ-
 էն:

Պ. Կաթողիկոսներէն, Եպիս-
 կոպոսներէն և քահանանե-
 րէն զատ, անթիւ նահատակ-
 ներ եղած են ժողովրդէն Պար-
 սից և Հաղարացւոց ձեռքով.
 բայց մէկ քանինները յիշէնք.
 Վարդանեանք յիշեցինք, Ա-
 տովմեանք զօրավարք, Շուշա-
 նիկ՝ դուստր Ս. Վարդանայ,

Մաբատ Բագրատունի, Դա-
 լիթ Դունեցի, Վահան Գողթ-
 նեցի, Սահակ և Համազասպ
 Արծրունիք, Մաբատ սպարա-
 պետ, և այլն:

Հ. Ի՞նչ նշանաւոր անձինք
 ունեցաւ հայոց եկեղեցին
 ութ հարիւր ութսունուհին-
 գէն հազար երեք հարիւր
 եօթսուներեքին:

Պ. Եկեղեցականաց կարգէն
 եղողներն են Պետրոս Գետա-
 դարձ, Գրիգոր Վկայասէր,
 Բարսեղ, Գրիգոր Պահլաւու-
 նի, Ներսէս Շնորհալի, Գրի-
 գոր Տղայ, Գրիգոր Ապիրատ,
 Ներսէս Լամբրոնացի, Ս. Գրի-
 գոր Նարեկացի, Խոսրով Ան-
 ձեացի, Յովհանն Կաթողիկոս

Պատմիչ , Թովմայ Արծրունի ,
 Արխատակէս Լաստիվերացի ,
 Յօհաննէս սարկաւազ վարդապետ .
 իսկ Թագաւորաց և իշխանաց կարգէն Աշոտ Բագրատունի ,
 Սմբատ , Աշոտ Ողորմած ,
 Գագիկ Բ. , Ռուբէն իշխան՝
 որ Ռուբինեանց Թագաւորութեան
 հիմնադիրն է , Գրիգոր Մագիստրոս ,
 և այլ բազումք :

Հ. Հայոց եկեղեցին ո՞ր քրիստոնեայ
 ազգերէն նեղութիւն կրած է :

Պ. Գլխաւորապէս Յունաց ազգէն ,
 որոց Թագաւորները և պատրիարքները ոչ միայն շարունակ
 ջանքեր կ'ընէին և մինչև այսօր
 կ'ընեն որ մեր ազգը

միանայ իրենց եկեղեցւոյ հետ ,
 սկսեալ Քրիստոսի հինգերորդ դարէն ,
 Քաղկեդոնի ժողովէն , այլ և մեր
 եկեղեցւոյ հետ և Բագրատունեանց
 Թագաւորութիւնը
 կործանելու և ազգը միշտ
 խռովութեան մէջ պահելու
 պատճառ եղած են : Յոյներէն
 ետքը Լատինք եղած են ,
 որ Ռուբինեանց իշխանութեան
 օրերը Ալիկիայի մէջ մուտ
 գտնելով իրենց ծեսերէն
 և եկեղեցական զգեստներէն
 ու արարողութիւններէն
 քանիները ջանացեր են խառնել
 մեր եկեղեցւոյ մէջը : Յոյներն
 իրենց որսացած Հայերն
 ունեցան , որոց մնացորդներ
 կան մինչև հիմայ և կ'ըս-

ուինն Հայ-Հոռոմ, որոց լեզունն հայերէն է, իսկ կրօնքը յու նական. և Լատինացւոց որ սացած Հայերը նախ ըսուեցան (ունիթոռք) միաբանողք (Լատինաց և Պապին գլխաւորութիւնը ընդունողք,) իսկ վերջէն ըսուեցան Կաթողիկ:

Հ. Յունաց և Լատինաց գէմ ազգը պահպանողները ոյք եղան:

Պ. Թէպէտ շատերը եղած են, բայց գլխաւորապէս Յովհանն Արոտնեցին և Ս. Գրիգոր Տաթևացին են եղած, որք քարոզելով և շատ մը գրութիւններով հայ ժողովուրդը զգուշացուցին և պահպանեցին Յունաց և Լատինաց որոգայթնե-

րէն:

Հ. Հայոց եկեղեցին ժողովներ ունեցած է:

Պ. Երբ հարկը պահանջեր է, Կաթողիկոսի հրամանաւ է պիսկոպոսներ, վարդապետներ, քահանայք և աշխարհականք խառն ժողով կազմեր են եկեղեցւոյ կանոնաց և ժողովըրդեան պահպանութեան համար, կաթողիկոսն ուր որ գրանուած է, ժողովներ այնտեղ կը հրաւիրուէին: Այս ժողովները եկեղեցւոյ հաւատոյ էական մասերը երբէք չէին փոփոխեր, ձէսերուն ալ շատ ըզգոյշ էին. ուստի մեր եկեղեցին միշտ նոյն մնացած է:

Հ. Կաթողիկոսութիւնը երբ

Միսէն փոխադրուեցաւ Էջմի-
ածին:

Պ. Քրիստոսի հազար չորս
հարիւր քառասունումէկ թը-
ուականին, Սոյ Մուսաբէկէնց
Գրիգոր կաթողիկոսի օրովը,
և Կիրակոս Կաթողիկոսն օծ-
ուեցաւ Եջմիածին, իսկ Գը-
րիգորի յաջորդները շարունա-
կեցին Սոյ կաթողիկոսութիւ-
նը մինչև ցայսօր:

Հ. Աղթամարայ կաթողիկո-
սութիւնն ի՛նչ է:

Պ. Քրիստոսի հազար հարիւր
տասնուչորս թուականին Արծ-
րունեանց թագաւորութեան
օրով Դաւիթ Թոռնեցի անու-
նով եպիսկոպոս մը օծուե-
ցաւ Կաթողիկոս Աղթամա-

մէջը, որոյ յաջորդութիւնը
թէպէտ մինչև այսօր կայ,
բայց անուամբ միայն կաթո-
ղիկոս է, ինչպէս նաև Սոյ
կաթողիկոսն, որոնք փոքրիկ
թեմերունին, և միայն իրենց
թեմերուն համար եպիսկոպոս
կը ձեռնադրեն և մեռնել օրհ-
նեն, բայց իրենք Էջմիածնի
Հայրապետին հնազանդ են, և
Պօլսոյ պատրիարքի հրամանաւ
կը նստին և կը կառավարուին:

Հ. Մեր ազգային պատրիար-
քութիւնը ե՞րբ սկսած է Երու-
սազէմի մէջ:

Պ. Թէպէտ մեր ազգէն եկե-
ղեցականներ և աշխարհական-
ներ ի սկզբանէ քրիստոնէու-
թեան դանուած են Երու-

սաղէմ թէ՛ իբրեւ ուխտաւոր
 և թէ՛ իբրեւ աղօթաւոր և
 միաբան վանական ուխտ, ինչ
 պէս մեր պատմութիւնները
 և Երուսաղէմի մէջ եղած շէն-
 քերն ալ կը հաստատեն, բայց
 իբրեւ առանձին ազգային
 պատրիարք հաստատուեցաւ
 Սարգիս եպիսկոպոս հազար ե-
 րեք հարիւր տասնութեկ թը-
 ուականին սուրբ Յակոբեանց
 վանուց մէջը, որ շինուած է
 Միօն լերան վրայ ընդարձակ և
 հոյակապ: Երուսաղէմայ պատ-
 րիարքի պաշտօնն է հսկել մեր
 ազգին սեպհական եղած սուրբ
 տեղերն, և կառավարել վան-
 քը և այն կողմերը գանուած
 Հայ քրիստոնեայ ժողովուրդը:

Հ. Կոստանդնուպօլսոյ պատ-
 րիարքութիւնը երբ սկսած է:
 Գ. Տաճկաց Կոստանդնուպօլ-
 սոյ տիրելէն սկսած է Քրիստո-
 սի հազար չորս հարիւր յի-
 սուներեք թուին, և առա-
 ջին պատրիարքն եղած է Պրու-
 սայու Յովակիմ եպիսկոպոսը:
 Կոստանդնուպօլսոյ պատրի-
 արքները թէպէտ սոսկ եպիս-
 կոպոս կամ առաջնորդ են մայ-
 րաքաղաքին, բայց իբրև փո-
 խանորդ կը համարուին սուրբ
 Էջմիածնի Կաթողիկոսին՝ բո-
 լոր Տաճկաստանի Հայոց թեմե-
 րուն վրայ. վասն զի ժողովըր-
 դեան ընտրած Առաջնորդները
 Պատրիարքի կոնդակով կը վա-
 ւերանան, և անոր վկայագրով

կ'երթան Էջմիածին եպիսկոպոս
կը ձեռնադրուին: Պատրիարքը
Արօնական ժողով մը ունի, ու
րուն հետ կը գործէ և կը հսկէ
կրօնական գործոց և կրօնակա-
նաց վրայ. բայց միշտ երբ նոր
գործ կամ խնդիր պատահի՝ կը
գիմէ Էջմիածնայ Աթոռիկո-
սին:

Հ. Էջմիածնայ Աթոռիկոսն
ինչպէս կ'ընտրուի:

Պ. Առղէմի սովորութիւն է
Հայոց եկեղեցւոյ Հայրապետն
ընտրելու համար հրաւիրել
ուր ուրեք որ Հայք կան, որ-
պէս զի իրենց վիճակներէն ե-
կեղեցականք և աշխարհականք
որքան որ արժան գատեն՝ զըր-
կեն Էջմիածին, և ամենեցուն

հաւանութեամբ ամենէն ար-
ժանաւորն ընտրեն կ'աթոռի-
կոս: Իսկ հեռաւոր և գաղթա-
կան Հայերը կամ պատգամա-
ւոր կը զրկեն կամ իրենց ընտ-
րութեան թուղթը: Աթոռիկ-
կոսութեան ընտրելին կրնայ
լինիլ եպիսկոպոս, վարդապետ,
քահանայ, և մինչև իսկ աշ-
խարհական, զոր կը ձեռնադ-
րեն և կ'օծանեն մեծ հանդի-
սիւ երկոտասան եպիսկոպո-
սունք:

ՀԱՆԳԱՆԱԿ ՀՍԻԱՏՈՅ

“Հաւատամք ՚ի մի Աստուած՝
Հայր ամենակալ՝ յարարիչն երկնի
և երկրի, երևեցեաց և աներևութից:

“Եւ ՚ի մի տէր Յիսուս Քրիստոս՝
Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ
Հօրէ միաձին, այսինքն յէութենէ Հօր:
Աստուած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ,
Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ
ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած:
Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր,
որով ամենայն ինչ եղև յերկինս
և ՚ի վերայ երկրի, երեւելիք
և աներևոյ թք:

“Որ յաղագս մեր մարդկան

և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ
յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ
սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով: Որով էառ
մարմին, հոգի և միտք, և զամենայն
որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս՝
և ոչ կարծեօք:

“Չարչարեալ, խաչեալ, թաղեալ.
յերրորդ աւուր յարուցեալ.
ելեալ ՚ի յերկինս նովին
մարմնով նստաւ ընդ աջմէ
Հօր:

“Գալոց է նովին մարմնովն և
փառօք Հօր, դատել զկենդանիս
և զմեռեալս: Որոյ թագաւորութեանն
ոչ գոյ վախճան:

“Հաւատամք և ՚ի սուրբ Հո-

զին՝ յանեղն և ի կատարեալն :
 Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մար-
 գարէս և յաւետարանս . որ
 էջն ՚ի Յորդանան , քարոզեաց
 զառաքեալն և բնակեցաւ ՚ի
 սուրբսն :

« Հաւատամք և ՚ի մի միայն
 ընդհանրական և առաքելական
 եկեղեցի , ՚ի մի մկրտութիւն ,
 յապաշխարհութիւն ՚ի քա-
 ւութիւն և ՚ի թողութիւն
 մեղաց , ՚ի յարութիւն մեռե-
 լոց , ՚ի դատաստանն յաւիտե-
 նից հոգւոց և մարմնոց , յար-
 քայութիւնն երկնից և ՚ի
 կեանսն յաւիտենականս :

« Իսկ որ ասենն , էր երբեմն
 յորժամ ոչ էր Որդի , կամ
 էր երբեմն յորժամ ոչ էր

սուրբ Հոգին , կամ թէ յոչէ-
 իցեղեն , կամ յայլմէ էութե-
 նէ ասեն լինել զՈրդին Աս-
 տուծոյ և կամ զսուրբ Հոգին ,
 և թէ փոփոխելի են կամ այ-
 լայլելի , զայնպիսիսն նզովէ
 կաթուղիէ և Առաքելական
 սուրբ Եկեղեցի :

« Իսկ մեք փառաւորեսցուք
 որ յառաջ քան զյաւիտեա-
 նրս , երկիրպագանելով սրբոյ
 Երրորդութեանն և միոյ Աս-
 տուածութեանն Հօր և Որդ-
 ւոյ և Հոգւոյն սրբոյ . այժմ
 և միշտ և յաւիտեանս յաւի-
 տենից . ամէն , , :





